ԱՐԱՐԱՉ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ,
ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

ԱՄՍԱԳԻՐ

ԹԻՒ Զ. ՏԱՐԻ ԻԲ. ՅՈՒՆԻՍ 30

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ. Ազգերի *գլխին եկածն ու գալիքը.* (Թարգ.) Գ. Ե. Ա. 299

ՊԱՏՄԱԿԱՆ. *Նկարագիր Ս. Յովհաննու վանուց և վիճակի նորին Բագրեւանդայ* (Շարունակ. և վերջ) Պ. Յ. Մուրատեանց . . . 308

ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ. *Ճանապարհորդական նկատողութիւնք* (Շարունակելի) Քաղքերուն . . . 321

ԿՐՕՆԻ *ուսումնասիրութեան.* (Շարունակելի) Խոհակ Յարութիւնեանց. 335

ԱԶԳԱՅԻՆ. *Վարդապետական կոչումն և նոր Սարկաւագունք.* 353

Յայտարարութիւն. . . . . .

Ծանուցումն . . . . .

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍԻՐՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

1889—ԻՅԼԸ

Ընդհանուր Կանոնադրութեան Հոգևոր Ա՛ենարանի Ս՛այր Ընթերցման, ուսումնասիրաբար ի Թեմական Հոգևոր Դպրոցս ի կամին մուտանել յառաջին Լսարան Ա՛ենարանիս. պարտաւորեալ գոլով ենթարկիլ քննութեան՝ յառարկայս կարևոր դատեալս ի կողմանէ Ուսումնական Խորհրդոյ Ա՛ենարանի, Խորհուրդն որոշեաց ծանուցանել ի գիտութիւն Տեսչութեանց և աւարտողաց ի Թեմական Հոգևոր Դպրոցս թէ՝ կարևոր առարկայք յորս ունին քննիլ ցանկացողք ի մուտանել յառաջին Լսարան Ա՛ենարանիս, հետևեալքն են.

Կրօն
1, Ընկեղեցական Պատմութիւն Հայոց, ընդարձակ:
2, Քրիստոնէական Վարդապետութիւն Հայ Եկեղեցւոյ, ընդարձակ:
3, Սրբազան պատմութիւն Հին և Նոր Կտակարանի, ընդարձակ:
4, Ծանօթութիւն Աւետարանացն Ղուկասու, Յովհաննու և Գործոց Ընտրելոց:

Լեզուք
1, Հայոց լեզու, գրաբառ շարադրութիւն.
2, Ռուսաց լեզու, շարադրութիւն.
3, Ֆրանսերէն լեզու, թարգմանութիւն:
Նիւթք ըստ դրսոցական ծրագրի:

Այդոքիկ առարկայք նշանակեալ են վասն այնոցիկ, որք ստացեալ գոլով զվկայական աւարտման դպրոցական ընթացից՝ ցանկան մուտանել ի Ա՛ենարան՝ մինչև անցեալ իցէ առաւել քան զամ մի ի թուականէ ստացմանն վկայականի. իսկ եթէ առաւել քան զամ մի անցեալ իցէ ի վերայ, յայնժամ ունին քննիլ յամենայն առարկայս դպրոցական ընթացից, համաձայն Շրջ. յօդուածոյ ծանուցման Վարչութեանս:

ՏԵՍՈՒՉ ՁԵՄԱՐԱՆԻ ՆԱՀԱՊԵՏ ԱԲԵՂԱՅ

Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Զ. — ՇԲԱՆ ԻԱ. 1889 ՏԱՐԻ ԻԲ. ՅՈՒՆԻՒ 30

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱԶԳԵՐԻ ԳԼԽԻՆ ԵԿԱԾՆ ՈՒ ԳԱԼԻՔԸ.

Ամեն կողմից վշտացած ենք, բայց հեղն ընկած չենք. կարօտ ենք, – բայց յուսահատուած չենք (Բ. Կորնթ. Դ. 8.):

Ա՛յ գլխի գալիքի զարմանալի հոսանքն, որ, ինչպէս յայտնի երեւում է ամեն աղգերի պատմութիւնից, ձայներ հանելով, գալիս ես անդուլ՝ անդադար. ո՛վ է կատարեալ քեզ, ո՛վ է խելք հասցնում քեզ: Ա՛յսօր բարձրացնում ես բաղդատութեան յաղթանակով՝ քո ալիքիդ վոհմանի վիրայ, վարն անարգուած խորասուզում ես նրանց քո պատրաքիդ մէջ:

Ֆո հարստութեանդ մաղթեղջուրից առաւօրէն և անխնայ թափում ես հունձքին, ու երբոր դեռ նոր ուզում ենք հաւաքել, մէկ էլ տեսնում ենք, որ էլ չկան, ոչընչացա՜ն։ Գիւղերի հրդեհիցն էլ, պատերազմի դաշտերի մէջ թափուած արիւնից էլ յետոյ տեսնում ենք, որ կրկին նոր օրհնութիւն է առաջ գալիս ապագայ սերնդի համար, գերութիւնից՝ ազատութեա՜ն գարուն։

Մարդկային ոյժն ու զօրութիւնն անզօր կանգնած են քո առաջդ՝ և իմաստութիւնն յիմարութի՜ւն է դառնում։ Կարծդ եմ իմ անձս քեզ հաւատալ ու յանձնուիլ քեզ, այ գլխի գալիք։ Թէ՝ իրրև փորձանք՝ ամենայն բան ջարդ ու փշուր անելով սառն ու քարացած սրտով, մահուան ու կեանքի վրայից անց ես կենում, գնում։

Դեռ հսկո՞ւմ է արդեօք Աստուած, որ կառավարում է մարդոց սիրտն, եթէ որ հսկում է, ո՞րտեղիցն են այսքան սարսափելի քանդումներ, աւերակներ, որ ազգերն ազգերի գլխին բերում են։ Եթէ որ դեռ և՛ս հսկում է Աստուած, ա՛խ, ինչո՛ւ ուրեմն հազարաւոր անմեղներ պիտի կորչին անաստուածների վայրենութիւնից։ Ի՞նչ մեղք է արել աշխատասէր՝ կամ անհատաբար չափաւոր կերպով ապրող մարդն՝ որ շատ անգամ մի սարսափելի ժամու մէջ բոլոր իւր ունեցած՝ չունեցածն, իւր բոլոր կեանքի մէջ գործ դրած աշխատութեան ու քաշած չարչարանքի պտուղը ձեռքիցը գնայ։ Ի՞նչ փառաւոր և վարձատրութեան արժանի գործ է արել չարագործն, որ իւր մարքսիմն ամենայն գրածներն, իւր բռնած ամեն ճանապարհները յայտնին, որ նա անպատիժ ոտնակոխ անի արգարներին, անմեղներին ծաղրի, բաղդատրներին անբաղդ անի։

Սարսափելով մտիկ եմ տալի աշխարհիս մեծ հանելուկի վրայ ու չեմ կարողանում հանել։ Ծովի վրայ պատահած մի մրրիկ ընկղմում է նաւատարմիներ և անասելի սուգ ու վիշտ բերում այն ընտանիքների մէջ, որ կարելի է դեռ նոյն ժամում իրանց բացակայ բարեկամների համար աղօթք էին ա-

նում ու նրանց յաջողութիւնով հայրենիքի վերադառնալու համար գոր տեղն ուրախանում։—Մի երկրաշարժ ոչընչացնում է գիւղեր ու քաղաքներ՝ և ամենալաւ որպէս և ամենատիտ մարդոց կեանքը՝ նոյն տարօրինակի կերպով։—Մի պատերազմ աւերում է շատ ծաղկած դրութեան մէջ եղած երկիրն և երկաթի տուրն թէ արդարի և թէ մեղաւորի արեան մէջ է թաթախվում։—Մեր գլխին դեռ Աստուած կայ արդեօք. եթէ կայ, ո՞րտեղից են այդ փորձանքները, որ անսղջում կերպով մարդոց գլխին գալիս են։

Առում են թէ՝ թշուառութիւնն ու աւերածը կարող է յուոյ եկող մարդոց համար օրհնաբեր լինել։ Բայց եթէ որ այս բանը կայ, դարձեալ պակաս իսիստ բան չէ, որ այժմ կեանք ունեցող սերունդն անխնայ զոհուի մի ուրիշ սերնդի համար, որ դեռ աշխարհումն չկայ։ Ինչո՞ւ համար իմ վերքերից արիւն պիտի գնայ, որ ուրիշներն ուրախութիւն կարողանան վայելել։ Եւ երբոր մեկն՝ հէնց վիրաբուժելու համար՝ ինձ ասի թէ՝ քո նախնիքդ էլ քիչ են քաշել, որ մէջ տեղ օգուտը դու տեսնես, ես կպատասխանեի թէ՝ ախոռ, հազար անգամ ախոռա՛, ինչո՞ւ պիտի նրանք այնչափ շատ բան քաշէին, ինչ է որ ես նոյնչափ աւելի բաղդաւոր ժամեր վարել էի։

Ինչ որ իմ կեանքումն տեսել եմ, չեմ մոռացել. բայց թէ էլ ինչեր պիտի գան գլխիս, այդ ինձ յայտնի չէ, Արդեօք իմ խաղաղասիրութիւնս ուրիշների թշնամութեան դէմ ինձ միշտ կպաշտպանի՞. իմ արդարասիրութիւնս՝ անարդարութեան դէմ բանի տեղ անց կկենա՞յ. իմ աշխատասիրութիւնս՝ աղքատանալուց, նեղ օրերի հասնելուց ու շատ բանի կարօտ մնալուց ինձ միշտ կազատի՞։ Ապա ինչո՞ւ համար արդեն շատ հազարաւոր մարդիկ, որ ինձանից շատ լաւ էին, բոլորովին փչացան։

Ուրեմն առաքինութիւնն անբաղդութեան դէմ վահան չէ՝ ամենևին։ Ուրեմն մարդուս գլխին գալիքը պղնձի կուրծքով անց է կենում աշխարհիս վրայ ու փչացնում մեղաւոր ու անմեղ կեանքը, տարբերութիւն չդնելով, թէ ումն է հարուստ տալիս։—Ի՛նչպէս հանելուկի նման խելք չհասցնելու բան է իմ անցեալս, ինչպէս մութով պատած է իմ ապագան։

Շատ անգամ վախենում եմ, որ ինձ խոչնեմ: Մարդուս սաժիկ շատ աւելի մի բան պէտք է լինի ձէջն, որ այսպիսի ժամանակներում Պօղոս առաքեալ հետ կարողանայ ասել՝ ամէն պէտ պատապան+է ձեզ եղ+, քայց չէն+ նեղը-ում: Սրպէս հանգստո-ւթիւն ը-նէնո+, քայց չէն+ յաւիտեանո-ում»:

Ճշմարիտ է, որ մարդ ես, ու մարդկային սրտի քաղաքացիութիւնը բաւական չէ, որ կեանքի ամենայն փոթորիկների դէմ քաց ճակատով դուրս գաս՝ և ամենատարափերի բանին էլ սպասես՝ առանց ինքդ քեզ կորցնելու: Սրա համար մի ապաստան պէտք ա՛ +ալը-ւիւն պէտք է ունենայ մարդս՝ սրտի մի քաղաքացիութիւն, որ հենց Աստուածամօրից է սեզ գալիս,—Այս անխռով հանգստութիւնը՝ փոթորիկների ժամանակ, որ սպասւում են մեզ սչընչացնելու՝ միայն Յիսուս Քրիստոսով ենք ունենում, մեր հաւատով, որ ունինք նրա խօսքին և իւր կրօնի՝ մարդուս սրիացնող, բարձրացնող զօրութիւնով: Ինչու որ Աւետարանն Աստուծոյ մի զօրութիւն է՝ մարդուս երջանկացնելու համար, և Տէրն ասաց թէ՝ մի վախենար, ես քո մօտ եմ:

Յարէն՝ գլխէդ եկած խոչյ-ւիւ-ննէրն՝ որ նախախնամա-ւիւնը չբէ՞ր է +էդ վէրայ՝ ա՛ ախ օչէչ ես +աղա՛ս. յարգէչ այդ փոչյանդներն, էնէ որ +էդ խնամ ա՛ անպրպաչ էլ էրևին:

Անտրգաճի:—Այս բանը մարդուս սահմանաւոր խելքը մինթէ կարող է ասել քոլոր աշխարհիս Կառավարչին, որոյ առաջը հազարաւոր տարիներ մի վայրկեան են, ամբողջ աշխարհները փոշու մի հատիկ միայն, թագաւորներն ու ազգերն՝ անզօր ատուներ:—Անտրգաճի, Ո՞վ կարող է արգելք խելք հասցնել Աստուածոյ խորհուրդներին ու նպատակներին, որ համարձակուի խելքի սակ քցել ու դատել Աստուածոյ խորհուրդներն, որոնցով Ամենաբարձրեալն ուզում է հասնել ամենաբարձր նպատակի: Չհասկացող ու անփորձ երեխան էլ կարող է շատ անգամ իւր մորուքն իրրև անարդար դատապարտել մի բան, որ իւր աւելի հասկացող ծնողքն անում են: Բայց յետոյ շատ անգամ շատ տարիներից յետոյ միայն՝ երեխան հասկանում է իւր ծնողաց աւելի խելօքութիւնն ու բարութիւնն՝ և օրհնում նրանց: Բարի հայրերն ու մայրերը մինթէ

անհասկացող երեխաների մոքի նախատպարմունքով՝ չէ՞ սի-
տի կենային իրանց ձեռք առած միջոցներից։ Կամ կարող էն
արդեօք հայրն ու մայրը՝ խելքը դեռ չքացուած երեխային՝
միշտ բացատրել, հասկացնել թէ՝ ինչո՞ւ են շատ անգամ հետը
խիստ վարուում և իր սրտաուքներիդը սիրտներն ամենևին
չի շարժում, որչափ էլ իրան սիրում են։ — Տէ՛ս, ո՛վ Աստուածոյ
զաւակ, այսպէս է բանը քո և քո երկնաւոր Հօր մէջ։ Նա հա-
րիւրաւոր տարիներում մարդուս գլխին գալիքներ է դրկում.
բայց նրանց մէջն են հէնց կեանքէդ ժամերի մէջ լաւ հաշուած
գլխիդ գալիքներն էլ։ Նա է կարգաւորում ազգերի բարին ու
չարը. բայց այդ կարգադրութեան մէջն են մարդկային ամենա-
աղքատ գլուխների չարն ու բարին էլ։ Կամ մի՞թէ դու կարծում
ես, որ առանց իր գիտութեան մի ճնճղուկ տանիքից ցած
կընկնի, կամ առանց իր կամքին մի որդն կմեռնի, որ, չիմա-
նալով, ոտովդ կոխում ես վրան, անդ կհնում։ — Մեր գլխին
գալիքների մէջ՝ շատ բան կարող է քեզ անարդար երևնալ, բայց
երևայիքից հեռևանք մի հանիլ թէ՝ յիրաւի անարդար է։ Փառք
տուր Աստուածոյ գերագոյն իմաստութեանն ու անչափ ողոր-
մութեանը նաև այն ժամանակ, երբոր սրտիդդ արիւն գնում
լինի՝ և երբոր քո սահմանաւոր խելքովդ կարծում լինիս, որ
հակաստութիւններ ես տեսնում։

Ծաղկէը այն փոչիներն, որ Աստուածդ ապտեղէ վրայ պէ՞տ է
պատճառ որ ինչ էլ որ պատահի նրանց, մի գերագոյն իմաստու-
թեան արածն է, մի յաւիտենական սիրոյ արածն է։ Ուժոր այդպէս
է մանկ տալիս աշխարհիս մէջ պատահած փորձանքների վրայ, նա
մի իսկ իմաստուն է, մի մեծահասատ քրիստոնէի աչքով է
մանկ տալն։ Ինչ որ Աստուած տնօրինում է, մինչև անգամ
ամենաստոկալի բանն էլ, միշտ պատիժ չէ նոցա համար, որոնք
որ ենթարկուում են այդ տնօրէնութեան, այլ շատ անգամ
մաքրող մի փորձութիւն, որով փորձուում են։ Այո՛, մեզ մի-
այն անյայտ՝ շատ և շատ մեծ պատճառներ կարող է ունենալ
գերագոյն իմաստութիւնն, որ ծանր փորձութիւններ տնօրինի
մեզ համար, — այնպիսի պատճառներ, որոնց ամենախելօք մար-
դու խելքն էլ չէր հասնիլ, երբոր հրկնքից մի հրեշտակ էլ

ցած գալ այն պատճառները իրան յայտնելու։ Ու՛վ այնքան յանդուգն կարող է լինել, որ համարձակուի ասել թէ՝ այս ազգն արժանի է իւր գլխին եկած անբազդութեանն, իւր դառը վիճակին, որովհետև բոլորովին ինքնասէր, ուտել՝ խմելու և անտարակուսութեան ետևից էր ընկած, անկարգ էր ու գռեհիկ։ Ընտանիքի հայր համեստ ու հանդարտաբարոյ, աշխատասէր մարդն էլ գուցէ էր ու զեղխ, որ իւր տնակն այրեց, մոխիր դարձրեց պատերազմի կրակի ալիքին։ Այս՝ այն պատկառելի ծերունին էլ այնչափ չարագործ էր, որ անգութների սուրը նրան մորթեց։ Ի՞նչ մեղք ունէր անմեղ, անլեզու երեխան, որ ժպտալով հոգին աւանդեց օրօրոցի մէջ՝ ծխից ու կրակի ալիքներից, որ տունը քանդեց, փուլ ածեց։ Վայը կգար մեզ կըտաներ։ Եթէ որ Աստուած մեզ այսպէս դատէր. այն ժամանակ աշխարհիս վրայ կգտնուէր մի տեղ արդեօք, որ իւր մեղքերի համար չկորչէր։ Խստասիրտ անսիրտութիւնով երբէք մի դատապարտել հէնց մի անբազդ մարդու էլ, ուր մնաց մի ամբողջ ազգ, ինչու որ ամեն մի ազգի մէջ հազարաւոր անմեղներ կան։ Ազգերի գլխին եկածների մէջ շատով պիտի ճանաչենք ու հասկանանք Աստուծոյ մեծ ներգործութիւնները մարդկային ազգը կրթելու համար։

Կընկնէ խօսքը մեծ խօսք է՝ ու դրանով շատ բան պէտք է հնախանանք։ Այդ խօսքով պէտք է հասկանանք Աստուծոյ գործքն. որ ունի մարդոց հետ՝ ու մարդոց իրար հետ ունեցած գործն, որ Աստուծոյ մարդոց հետ ունեցած գործին նման պիտի լինի։—Բոյսերն ու կենդանիները՝ իրրև անբան արարածներ՝ մեծանում են իրանց գլխի, կրթող ու մեծացնող չունին։ Թէև մի բոյս աւելի լաւ հողի վրայ տեղափոխուելով, կրթող է, այո՛, ազնուանալ, կամ մի կենդանի՝ արհեստական կերպով սորվեցնելով այս՝ այն բանի մէջ կարելի է վարժեցնել, բայց կրթել, բան սովորելը՝ բառի աւելի բարձր նշանակութիւնով՝ միայն բանական մարդուն կարելի է։ Ծնողքն ամեն բանից առաջ սուրբ պարտականութիւն ունին, որ երեխայի սրտի մէջ գտնուած բարի սերմերն աճեցնեն. ու նրա մէջ եղած չար բանը չթողնեն, որ հետը մեծանայ, այլ նրա մէջից՝ առաջ

քիչ քիչ՝ իսկ յետոյ արմատով կորչին. պարտական են, որ իրանց զաւակին արդար ու բարեպաշտ մեծացնեն՝ ու մինչեւոյն ժամանակ նրան սորվեցնելով՝ տան այն տեղեկութիւններն ու յատկութիւնները, որ երեխային մի ժամանակ պէտք կլինին իւր կեանքի մէջ ինքնագլուխ ապրել կարողանալու համար, որ ոչ ոքից կախուած չունենայ։ Ա յս նպատակներին հասնելու համար՝ հայրն ու մայրը՝ թէ խմաստուն պէտք է լինին և թէ սէր ունենայող իրանց զաւակի վրայ. խմաստութիւն ու սէր, այս երկուսն էլ պիտի ունենան, մէկն առանց միւսին չլինի։ Սէրն միշտ արթուն է, միշտ յորդորում է և զգուշացնում ու երբէք հանգիստ չի մնում. իսկ խմաստութիւնը՝ կրթելու, բան սորվեցնելու հետն է, երեխայի ամեն ուզածները չի կատարում, խիստ է, երբոր պէտք է կակուղ չվարուել՝ ու մինչև անգամ՝ ներել չունի և անողոք կերպով պատժում է։ Բայց պատժելը լինում է ոչ թէ ծնողաց բարկանալուցը, կամ թէ ուրախութիւն զգալուց, որ երեխայի սիրտը պէտք է ցաւեցնեն, այլ այն մտքով է, որ նրա բնաւորութիւնն ազնուացնեն։ Խրատելն, երբոր խմաստութեամբ է լինում՝ ծնողաց իրանց զաւակի վրայ ունեցած ջերմ սիրոյ ապացոյցն է միշտ։

Ընտանեկան կեանքը՝ մի երկրաւոր փոքրիկ օրինակն ու նմանութիւնն է՝ ազգերի իրանց երկնաւոր Հօր հետ ապրելի մեծ չափով ունեցած յարաբերութեանը։ Կրթելու, բան սորվեցնելու ոչ մի խիստ միջոցն էլ անարդարութիւն չէ։ Մի ազգի ամեն մի անբաղդութիւնն՝ Աստուծոյ բարկութիւնն ու սրած դատաստանը չպիտի համարենք. այնպէս էլ մի յաղթութեան մէջ, որ զօրքերի գնդերն անում են, իրանց առաքինութեան և արդարութեան վարձատրութիւնը չպիտի տեսանենք։

Պէտք է ասենք, որ ազգերի գլխին եկածների մեծ մասն ազգերն իրանք են առաջնաւանից իրանց համար պատրաստում։ Ոչ ոք չէ կարող չկասկածել, կամ ուրանալ, թէ ինչպէս որ մի մարդ՝ իւր վատ կեանքովն իրան թուլացնում՝ ու ժից գցում է, մի ուրիշն՝ իւր անհաւատարմութիւնովը, խորամանկութիւնովն ու խարդախութիւնով՝ իւր ունեցած հաստատակաց հաւատարմութիւնը կորցնում է, մի ուրիշն էլ՝ շռայլ ծախքեր անելովն՝

յետին աղքատութեան իրան հասցնում. այնպէս էլ մի ազգ՝ իւր ինքնասիրութիւնովը, մեղկութիւնովն ու անմիաբանութիւնով՝ ինքն է պատրաստում իւր անկասկած կորուստն։ Ինչպէս որ ամեն մի մարդ իւր գլխին՝ այնպէս էլ ամեն մի ամբողջ ազգ պէտք է կրթուած ու վարժուած լինի՝ չափաւոր, արդար, առողջ, ուժ պահանջող ու կռուի կեանքի, որ ամէն մի մրրիկի դէմ դնել կարողանայ։ Բայց ինքներս մեղանից չպիտի ծածկենք, որ պատահարները քաջասիրտ մարդուն էլ նոյնպէս կարող են գետինը գլորել, ինչպէս որ անսիրտ վախկոտին, թէ շատ անգամ ոչ այնքան ազգերն են պատերազմի վտանգների պատճառը լինում, որքան որ իրանց վրայ իշխողներն, և թէ վերջապէս՝ ոչ թէ երկրի իշխաններն են, այլ հանգամանքի զօրաւոր բերմունքն է, որ հրամայողաբար նրանց ստիպում է պատերազմ դուրս գալու։ Բայց հրամայողաբար հարկագրող այս հանգամանքներն այսօրուան օրս ապրողներից չեն առաջ գալիս, այլ մեծ մասն այն մարդոց արած գործերիցն է, որ վաղուց արդէն մեռած են,

Եւ այսպէս աշխարհիս և ազգերին հասած վիճակի թեզն, որ գարեց դար շարունակաբար մանուում է, պատահմանքի արածը չէ, այլ ընդհակառակն ամեն տեղ Աստուծոյ մասն ենք մեջը տեսնում։

Ծարթենը գլխիդ եկածներն, որ Աթոռաձանչեան են, ինչո՞ որ էդ խոտոռ-ընկան դեղ կըլնէը— ջիջոններն են։ —Մինչև անգամ մեզ ամենասարսափելի երևեցած փորձանքն էլ ի բարին է։ Ասում ենք թէ՝ մեզ ամենասարսափելի երևեցած փորձանքն էլ. ինչու որ ամեն բանն էլ, ինչ որ երևում է, այն չէ։ Սուտ չէ, որ ամեն մի պատերազմ, ամեն մի թանկութիւն, ամեն մի ժանտախտ այնպիսի մեծ թշուառութիւններ է բերում մարդոց վրայ, որ լեզուով պատմելն անկարելի է։ Բայց ի՞նչ է իսկապէս այս թշուառութիւնը. շատ բարիքից զրկուելը չէ՞, որ այլ և այլ փորձանքով ամեն մի մարդու ձեռքից կարող է դուրս գալ առանց պատերազմի էլ. պատերազմի՝ կամ մի ժանտախտի սաստիկ վախն, որ յանկարծ ու շատերի վրայ է հասնում և անբաղդութիւն ու մահ բերում. իրաւ է, մեզ սարսափեց-

նում է։ Բայց երբոր հազարաւոր մարդիկ մի պատերազմի մէջ մեռնում են, մի մահ է, ուրիշ աւելի մի բան հօ չէ՞։ Մի մահ է, մի անգամ մեռնել է, որ ամեն մի մարդու համար կայ եւ ու առաջ. մի մահ է, որով աշխարհիս երեսը ցրուած հազարաւոր մարդիկ մեռնում են՝ երկար ու ծանր հիւանդութեան ցաւեր քաշելով իրանց անկողինքի մէջ։ Հազարաւոր մարդիկ էլ կան, որոնց սիրան աւազ ուրախ էր. բայց սովից, կամ արհեստներն ու առևտուրն ընկնելուց, ալքատանում են՝ ու պէտք է զրկուին մինչև այդ ժամանակն իրանց ունեցած կեանքի շատ յարմարութիւններից ու վայելչութիւններից, որով գոհ ու հանգիստ սրտով ապրում էին. տեսնում ես որ՝ այդպիսի մարդիկն այժմ իրանց ունեցած այդ օրերում շատ անբաւդ են համարում իրանց։ Բայց այսպիսիները չեն մտածում, որ աշխարհիս վրայ միլիօնաւոր մարդիկ կան, որոնք որ առանց անքաղդութիւնների, փորձանքների մէջ ընկնելու էլ ոչ լաւ են ուտում, խմում, ոչ լաւ հագնում, ոչ լաւ ապրում, ու էլի իրանց կեանքից ու Աստուածանից գոհ են։ Ուրեմն ով որ տանել, դիմանալ չի կարողանում՝ և իր նեղութիւն քաշած օրերում սրտիկն միշտ ախ է քաշում, որ էլ այնքան չունի, ինչքան որ առաջ ունէր, ու յուսահատութիւնից չէ իմանում ինչ անի, այնպիսի մարդն արժանի է իր ցաւին, որ քաշում է։ Ինչու որ իր համար երկրաւոր բարին երկնաւոր բարիքի տեղն էր բռնում, իր երկինքն՝ երկիրս էր, որ այնպէս չպիտի լինէր. ու իր սուտ երկինքը փուլ եկաւ, քանդուեց, որ միայն բերի այնպիսի բարիք, որ միշտ կմնայ, որ մտածի հոգւոյ մեծութեան վրայ՝ իր առաքինութիւնովն, Աստուծոյ երկիւղի վրայ, որ սրտիցը հանել էր, իր հոգւոյ զօրութեան վրայ՝ մարքուր խղճմտանք ունենալովն։

Այո՛ բարիքի վրայ մտածենք, ինչու որ ուրիշ ամեն բան, մինչև անգամ մեր մարմինն էլ, որ ունինք՝ մեր մնայուն սեպհականութիւնը չէ։ Մի՛ վախենաք նրանից, որոնք որ մարդին են ապանո-ղ. այլ վախեցէք նրանից, որ անէ էլնանութիւն ոչնչանալ հոգին և մարդին է գետին հրոյն։

(Թարգմ.) Գ. Ե. Ա.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՆԿԱՐԱԳԻՐ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՆՈՅ

ՍԻ

ՎԻՃԱԿԻ ՆՈՐԻՆ ԲԱԳՐԵՒԱՆԴԱՑ,

(Շարա–նակո–ւմ–ն և վերջ)

ԺԹ.

Քրդական ազգը՝ որ ի հայս անցեալ 18րդ դարու վերջի կէս բաժնէն ի վեր տակաւ առ տակաւ իբրև գող, անգործ, ապատակ լեռնական ցեղ մուտ գտաւ, տեղի տալով հայերի յաճախակի տեղափոխութեան, ոչ միայն ատա, այլ նաև ի բաժնի պարսկահայոց իւր սովորական խժդժութեամբքն... տեղւոյն մեծամեծաց ուշն և ուրուշը իւր վերայ դարձրած էր։

Այս պատճառաւ, ի քրդաց Ջալալցի աշիրաթը, որ 1835, ի 1-ն մայիսի իբրև թունաւոր օձ նոր էր սոդոմակել, դուրս եկել ձմերային խաւարամուտ մասեաց այրերէն և իւր բազմութեամբն տեղակալել նոյն սարի արևելեան լեռնաշղթային՝ պարսից Նայիպ Սուլթանայ Աբաս Միրզայի Ամբրզատայ արքայորդին, որ Ջարպատականի կիշխէր, Խոյ քաղաքէն գունդ մը զօրք առած՝ եկաւ նոցա վրայ, որոնցից 100 տան չափ աւարի տուաւ ու ցրուեց, ոմանց գերի վարեց, մնացեալ մեծ մասն խուսափելով անտի չուեցին, անցան այս կողմ՝ ի Բագրեւանդ Իշխ-Քիլիսէ վանքին հանդէպ Բարթող լերան վերայ իրենց սեւ, մազէ վրաններուս նիրքև բնակեցան։ Դարձեալ՝ ոչ թէ իբրև մարդ, այլ իբրև գիշատիչ արծիւ մը, որ ընդ կատարս լերանց հանգչի աչքունք չուրս կողմ ի խոնարհ չառած՝ որսի սպասելով։

Քանզի նոքա ինչպէս և միւս քրդերը տպրուստի ուրիշ միջոց չունին, այլ յայոնի և գաղտնի աւարառութեանց և գողութեանց արդեամբք և մերթ անասնատպհութեամբք կըբաւականանան։

Այդ օրերէն ետև երբ Տրապիզոնէն պարսկաստան տանող մեծ արահետէն պարսից մի ծանր կարաւան կանցնէր, որք բեռնաւորուած էին եւրոպական ապրանօք, սոյն Ջալալցիք ի նոցանէ իրենց վրէժը լուծելու անձամբ 1000 ձիաւորէն աւելի մարդիկ զինուորեալ Ղարաքիլիսէի մօտ վրայ յարձակեցան, որք չնայելով սաստիկ դիմադրութեան մը, բաղխեցան, կորսընցնելով իրենցից չորս անձինք և երկու պարսիկ, դարձեալ զարկին, տարան 1000էն աւելի հակ ապրանք. մնացեալքն ցիր և ցան ըրին ընդարձակ դաշտին մէջ, որ մերձակայ գիւղերից, ալ այն օրեր կարաւանի թափածն՝ ժողովողը՝ ժողովողի վրայ էր։

Այն ինչ արձագանք գտնելով յարքունիս երկուց սերուցթեանց ապրանաւաճառից վաճառականաց բողոքարկութեամբ՝ կարնոյ կուսակալ Ասատ փաշային և Դաւրիժոյ հրամանատար Ամրուլլամ նախարարին, իւրեանց կառավարութիւնից հրաման ընդունելով՝ մի մի վաշտ զօրքերով եկան ի Բայազիտ. ուր յետ ընդ երկար թերու դէմ խօսակցութեանց հաստատեցին անդ ի մէջ, որ օսմանեան կառավարութիւնը 8000 քսակ այն ապրանաց գին առնէ ոճրագործ Ջալալցիներէն, յետ վեց ամիս ժամանակաց վճարէ պարսից դեսպանին, որ մնաց ի Պայազիտ։ Ցետ այս որոշման, որ սոյն խնդիրն երկու ամսուայ չափ քննութեան բովէն կանցնէին, Ամրուլլամ նախարարն իւր հրաժեշտի պէսայնը տալով Ասատ փաշային՝ մեկնեցաւ անտի գնաց ի տեղի իւր։

Ջիլանդի Հիւսէյն աղան և Բահլուլ փաշան մի և նոյն ժամանակ երաշխաւոր եղան նոյն գումարը հատուցանելու ուստի և իցէ, նոցա չվնասելու պատրուակաւ, որով Ասատ փաշան ի նոցանէ մուրհակագիր առնելով՝ անզուսպ աւազակունք անպատիժ արձակուեցան։

Այնուհետև Ասատ փաշային, իր հրամանաւ առ ինքն մատուցեալ, երկրէն առած իւր զօրաց ծախուց...հաշիւը տեսնելով՝ կամեցաւ 400 քսակ դրամ տալ Բահլուլ փաշային. սակայն նա մերժելով զայն բաշխեց նմա, որով ինքն ևս վոխագարձաբար իւր ապօրինի ինչ ինչ ընթացից համար բանտարկուած Ալի աղայն արձակեց, շնորհելով նմա միանգամայն Ալի աղայէն պա-

հանդուրժած 500 քառակ տուգանքը։ Ինքն անցեալ*) գնաց ի Կարին, գործոյն կատարումը յանձնելով Բահլուլ փաշային և Հիւսէյն ազային, որք բացարձակ իւրեանց խորամանկութեամբն խաբեցին զկուսակալը, այսու իրենց առջև շահու մեծ դուռ բանալով։

Քանզի նոքա իրենց արբանեակներով իրև տեղապի իրազեկ լինելով ամենայն իրաց և գաղանեաց փութացին ի կարաւանացիր տեղիս խուզարկութեան առնուլ։ Ապրանաց մեծ մասն վաղուց արդէն ծանուցեալ աւազակունք կլանել, ամրացեր էին յանմատչելի լերինս, մնացեալն ալ իրանք հաւաքելով ծածկեցին ընդ ձեռամբ, որով լսելի չեղև բարձրագոյն ակմբոց։

Ա յսոեղ փաշայն բացարձակ երկրի տէրն է. ժողովրդէն ով հոգի ունի ձայն բարձրացնել նորա դէմ. այս բախտի դատապարտեալները՝ կարծես որպէս անմահունչ ոչխար են դարձել իրենց կորչի առջև։ Ա յս անգամ չէ. նա քաջ գիտէ միշտ

(*) Երբոր Ծուռնաց Հերակլ կայսրը բազմաթիւ զօրքով Բագրեւանդի վերայով կանցնէր պարսկաստան երթալու ի ինդիր գերեալ խաչափայտին՝ գիշեր մի վանք ժնալով՝ բարեհաճեցաւ լսել ի նախորդաց մերոց սուրբ տաճարիս հին շէնքն, որ հիմնեալ կայր ի վերայ վիմի հաւատոյ, Ս Գրիգոր Լուսաւորչի ձեռակերտն է եղած. երբ նա Կեսարիոյ Ղևոնդիոս Կաթուղիկոսէն, նոյն հայրապետական կարգն առած կուգար ի հայս, աստ ժամանելով իսկոյն և եթ կործանեց հին հայոց հեթանոսական կրոնի տաճարը (բագինը)։ մեծաշօր Տրդատ թագաւորի ձեռնտուութեամբ կանգնեց նորա տեղ սոյն այս Քրիստոսի անուամբ կառուցեալ խորանը. Նորին վեհափառութեանը՝ անհամար բազմութեամբ դիմաւորող հայոց նոյն Տրդատ թագաւորը անգանօրէի ջուրն եփրատայ մկրտեց. Սրընթաց ջուրը ընդ կրունկ գառնալով՝ ցոլար սրբալոյս մեռոնն սքանչելահրաշ մեծ աւազանին վրայ, Ցայնժամ մկրտուած թագաւորի մականունը Ծովհաննէս յորջորջեց, որի անուամբն և մինաստանն յայնմանէ Ծովհաննես անունը ընդունեց։

Առաջս կայսրը իւր անչինչ յիշատակ խոստացաւ ի վերադարձին յաղթութեամբ զօրութեամբ սորա, վերադարձ առնելով զսուրբ խաչափայտն, գեղեցիկ իմն նորոգել տալ, մեծացնելով զայս հոյակապ եկեղեցիս պարըսպապատ բրգերով, Որով նա ասէ ի վերադարձին հրամայեաց տեղոյն առաջնորդ Ներսէս Իսրայէլ եպիսկոպոսին նորա հիմը ձգել, սակայն լսելով նա առումն Երուսաղէմայ ի մահմետականաց, իսկոյն յանձնեց նորին սրբասլնութեան, ինքն ընդ հուպ անցեալ դնաց ի Կ. Պոլիս։

կոչմնակի ճանապարհներով շահիլ, պոհելով մի բուռն սարկաց ժողովուրդ իր շահուն և կրից։ Ուստի առանց զանգիտելու բաժնեց զայն իւրաքանչիւր դաւառի և գաւառակներուն գիւղօրէից ազգաբնակութեան վրայ, գուցէ նորա կրկնապատիկն էլ. որպէս թէ սոյն գործի մէջ մատ ունեցողներէն և եթ առնելու պայմանաւ, սակայն չոր ու թաց — արդար մեղաւոր — մէկէն կայրուէին։ Ընդ ամենը մէկ խմոր ընելով սկսան ձեռն ի գործ արկանել. Բահլուլ փաշային իրան, Հիւսէին սպայն իրան չարաչար մորակի զօրութեամբ հաւաքել, այնու ամենայնիւ այս համագումարի 1/100 հազիւ ցոյց տրուեցաւ, առ որս անկ էր։ Սոքա ծանր խաղը նոր պիտի խազան, ուստի յառաջանոյ մեծամեծ չարիք աւաւել քան զայս ամենայն ար եղև։ Իբրև երաշխաւոր աւազակաց հապա սկսան կոչել զնոսա ի հանդէս, որ փութան գալ տպրանքը կամ նշանակեալ գումարը վճարել իրենց, գնիէ այն բարերարութեան համար, որ երաշխաւորութեամբ ցոյց աւուին նոցա ազատելով միանգամայն մօտալուտ վտանգէն։ Սակայն — էն ինչ գիտէ, նաւշն ինչ է, առժամայն ականջ չկախելով մերժեցին նոցա պատգամաւորները, որով հարկ եղաւ իրենց անձամբ երթալ նոցա մէջ, որք Մուսեռց աւրէն բռնած ամրացած էին այլ և այլ աշիրաթներով մինչ դլեաւն Սուկաւէտ, թոյլ չտուին երբէք իրենց մերձենալու։

Մինչ նոքա նկուն եղած կըվերապառնային անտի որպէս թէ

Իսրայէլ եպիսկոպոս եօթն ամ անդադար վերան աշխատեցաւ ինչպէս եկեղեցւոյ արտաքոյ կողման շրջապատ արձանագիրն կըցուցնէ. նա Հայոց ՉԹ թուոյն ձեռնամուխ եղած և Ղ. ին լմնցուցած է։

Իսկ գալով նորա այժմեան սեպհական կալուածոց, որով նա կառավարվում է, հաստատուած է ձեր ողորմած կառավարութիւնից. Մեր վիճակն արդէն անանկացած գոլով՝ գէթ նորա արդեամբք շատանամք ի շնորհս ձեր։

Պատմեց զայս յոյժ գեղեցկապէս Հանգուցեալ Սիմէօն վարդապետ նախկին առաջնորդ նոյն վանաց, երբ Ասատ փաշայն գալով անդ յայնժամ տեղեկութիւն ուզեց առնուլ նորա վերայով. որը ինչպէս և ինձ իւր մատնագիր Բագրեւանդայ պատմութեամբն առիթ տուաւ փոքր ի շատէ ըստ իմովսանն գրել զայս գործ, ազգային մի գլխաւոր գաւառի հինաց արկածալից անցքերն, ճշգրիտ տիպն ու պատկերը։

առաւել իմն զօրք առնելով՝ վերստին նոցա վրայ երթիան, ածել զնոսա ընդ լծով հնազանդութեան, որով մարթասցին առնել ըստ կամաց իւրեանց։ Բայազիտոյ՝ պարսից դեսպան եաւար իսան ի պաշտօնէ ծանոյց զայնս Ասատ փաշային, որ իմանալով եղածը՝ հրամայեց Կարուց Նէճիպ փաշային, որը բազմաթիւ զօրքով գնալով անդ չարագործներն իրենց մեծամեծօք ձերբակալեց ընդ որս և Բահլուլ փաշայն և Հիւսէին աղային և ուղարկեց ի Կարին..., ուր ոմանք բանդարկեալ և ոմանք իբր պատանդ արձակ մնացին մինչ ցնոյն տարւոյ Յունիս ամիսը։

Ապա ուղարկեց բռնեն զօրութեամբ Բասենոյ և Արշարունեաց Քրդաց անասունքն և տանց կահ կարասիք տանել տուաւ, և աճուրդով վաճառեցին, որից գոյացեալ 4000 քսակ դրամն յանձնեցին եաւար իսանին։ Արդարադատ Ասատ փաշայն չմոռացաւ բռնակալ Հիւսէին աղային ալ յիշել, ինչպէս և իր էլը (ցեղը), ուստի ամենէն յետոյ բերել տուաւ նորա 80 ուղտ և 2000 գլուխ ոչխարքն և ի Կարին ի փոխարէն պարտուց իւրոց։

Մինչ նա մնացեալ կիսոյն՝ 4000 քսակին ամբողջացման համար կըմտածէր, վանայ Թամուր փաշային, որ այն ատեն Կարին կըգտնուէր, նորա քով գնաց, Արտակերտի Քեօսօղլի Գէորգ աղայի վերնորոգութեամբ Պայազիտի գերիշխանութիւնն առած գնաց յԱլաշկերտ, յիշեալ գումարը անտի առնել, վճարելու դաշամբ։

Սակայն այս անձը բազմաց պարտատէր գտնում՝ յիշեալ Գէորգ աղային խոստացած էր, նախ քան զպարսից, զիւրն 1500 քսակն հատուցանել, որու համար օգնեց Բայազիտի կառավարչական զեկը ընդ նմին նորա ձեռք առնու, փոխանակ Բահլուլ փաշայի և ոչ նորա իշխանական տաղանդի համար, որ կըսակսէր իրեն։

Ուստի երբ սորա գալուստը լսեցին, ահաբեկուած ամբողջ ժողովուրդ թուրք և հայ միանգամ՝ ոտքի ելան, իրենց ծնողք զավայրը թողնելով՝ Երևանի նահանգը ուժաթափ ինկան։ Գարուն էր, որով ծաղկապաճոյճ դաշտօրայքն ընդերկար ժամանակս առանց մշակի... մնացին։

Սորա հետ մէկտեղ փոքր Ասիոյ մէջ սարսափելի սով մը ալ կը սիրէր։ 1 սամար ցորեն, որ ուրիշ տարիքն 20 ղուրուշ կարժե-

նար, 800 դուրուշի բարձրացաւ։ Մանուանդ Վասպուրականի, Տարօնոյ և Տիգրանակերտի մէջ, ուր սովն ինչ ոպատեհլով՝ ամենայն օր խումբ խումբ ընտանիքներ կուգային, որ առ քաղցու կմախք էին դարձել՝ Ալաշկերտէն, Բասենէն, Կարսէն այլ և այլ հայաբոյսեր կրատանային իրենց քաղցեալ որովայնին յագուրդ տալու։

Ասոր վրայ Թամուր փաշային 3 օր մնաց Վաղարշակերտի մէջ, անտի եկաւ գնաց ի Բայազիտ, ուր դատարկ գտաւ քսպաքը իր շրջակայիւք։ Բագրեւանդ գաւառի մէջ Իչ-Քիլիսէ վանքի միաբանք միայն և առաջնոյն աւերակաց մէջ Գէրգէռեան Ղազար ազգայն 5 ազգատ տներով և Փալանթարեան տէր Զաքարիայն մնացեր էին։

Թամուր փաշային այս աստիճանի մէջ տակաւին նոցա անգադար կը յղէր ի Մակու (Արտազ) և անտի իր զօրաց համար թշուառներուն պարագով փոխով պաշար բերել կուտար։

Տեսնելով որ այլազգ իր նպատակին չի կրնար հասնիլ՝ քան իր բնածին սովորական բարուց և վարուց, նենգ ու պատիր միջոցների ձեռնամուխ եղաւ։ Բազում յուսադրական գրոյց՝ գնելով ի բերան ումանց, յորից առ փախստեայ ժողովուրդս հասնիլ, որ փութով վերադառնան ի տեղիս իւրեանց ի վերաշինութիւն իրենց, երդուելով ըստ ամենայնի ոչինչ չպահանջել... ի նոցանէ. սակայն նորա ապատուամ բարուց վորձն վաղուց առած լինելով՝ երբէք չլսեցին նորա խրատուուաց կեղծ ու պատիր բանից, որ ստուգիւ կառաջնորդեր իրենց կորստեան խորխորատը։

Թամուր փաշային Բահլուլ փաշայի և Հիւսէին աղայի կուսակիցներէն վախնալով՝ որք իր գործողութեան անիւը կը դադարեցնէին, խնդրեց Ասատ փաշայէն առ յինքն ի Կարին երթալ, վասն գործոցն յայտողութեան. ուստի հրաման ընդունելով՝ դորա համար յայտնեց մնացեալ ժողովրդեան թէ «Ձեր խեղճ ու կրակ վիճակի և երկրի վերաշինութեան համար պիտի երթամ Էրզրում», առ այժմ ինձ պէտք է, շատ չէ, փոքր ինչ ճանապարհածախք», ուստի յայնժամ առաւ նրանցիյ բաւական դրամ նաև Իչ-Քիլիսէ վանքէն 300 դահեկան. իբրև ա-

Հերիւ հեղեղ մը անցնելով Ալաշկերտէն գնաց առ Ասատ փաշային։

Ասատ պատահած անցքիրէն հաղարէն մին պատմելով ասաց— բոլոր գործը սորա վերայ է կայանում նախ և յառաջ զբաղլոլ փաշային զրկել իւր հայրենական ժառանգութիւնից, որք են Դարանիք, Կոգովիտ (Զուխուր) Բագրեւանդ, Վալարշակերտ։ Մազազն, Աղիովիտ, Տուարածաթափ և Արտազ և աքսորել զնա հանդերձ ընտանեօք յանգարձ օտարութիւն՝ Զիլանի Հիւսէին ազային արձակելով քանուէն. վերջնոյն հետ, հաճեցնելով և զԿուտակալը՝ վերադարձաւ ի Բայազիտ։

Ի՛չ օրէն ըստ ծին պէտ Բաղլուլ փաշայի ընտանիքն ալ անդրոշ ժամանակաւ աքսորեց ի Կարին, ինքն հատուտուելով իւր իշխանութեան մէջ, սկսաւ անյագ ոգրկի նման ծծել խղճալի ժողովրդեան արիւնը։

Սա էր կարճ հատակաւ լի՛ ժանտ երեսօք. թխամորթ, սեւամօրուք և մրայօն։

Ագահն ամեն բանի կարօտ է, հոգին ու խիղճն մեռած լինելով իբրև բոր հանգիստ չի տար իւր անձին, որքան ժողովէ, չի յագենար, միշտ կկեղէքէ, կհարստահարէ զնմանս իւր։ Այս անխիղճ սրտրածն Բաբիլոնեան անշէջ հնոցին նման իւր ցանկութեան բորբոքման նիւթ մատակարարող գտաւ քրդաց մեղառանգ շէխերն, որք արտաքոյ օրինաց ստատպելախառն ատանդութեամբք մարդկան անուշյանեն զազգ իւրեանց։

Բանիւ և խորհրդով սոցա ելնելով ի Պայազտոյ հիւսիս—արեւմտեան կողմն Քօրուն և Մուսուն գիւղօրէից մարգագետիններու մէջ եկաւ, բանակեցաւ ընդ վրանօք։ Բուռն զօրութեամբ հրամայից Մասեաց դժուարամուտ քարանձաւներն ապաստանող Զալալչի աշիրաթին, որ հնազանդելով իրեն կամաւ գան և մնացեալ 4000 քսակն վճարեն։ Սակայն նոքա առ ահի երևան չելան, որքան և աշխատեցաւ Թամուր փաշային, իրենց վերջի պատասխանն այս եղաւ թէ «ինչ որ պահանջես կուտանք, այս քարի մէջն մեռնելով դուրս չենք գար քո առաջ»։

Թամուր փաշայի ուղածն ալ այդ էր, ուստի ետ կեցաւ բըռ-

նուիրեն բանեցնելէ նոցա վերայ, որով հնչուն դրամի փոխարէն նոքա իրենց մէջ ըստ թուոյ տանց իւրեանց՝ ձի, եզն, կով, ոչխար...հաւաքելով տուին ազատուեցան։

Բայց և այնպէս ամեն քան դարձեալ իր նախնական վիճակի մէջ մնաց, գործը գլուխ չեկաւ։ Բայազիտի բոլոր կերուածքի մէջ գտնուած հողագործ դասէն, որի մեծ մասն հայեր կկազմէին, իբր տուգանք առաւ ուզածի չափ դրամ, ի պէտս կթոյ 1 մատակ գոմէշ, 1 կով և 2 մաքի մէն մի գլուխ. իսկ Ղարաքիլիսայէն և Գեօլասօրայ բացառապէս, ուր կարաւանն ցրուեցաւ, 15—ական և Ալիկօլայ 5 քսակ։

Դրաւեց նաև Բահլուլ փաշայի ցորենի, գարու և այլ ամբարքն ու բոլոր անասունքն, որպէս զի ծախելով տայ նորա պարտուց փոխարէն Պայազիտցի Խաչիկ և Վաղարշակերտցի Գրիգոր աղայից, թէպէտ Բահլուլ փաշայն բողոքեց այս անտեղի արարմանց դէմ, սակայն ընդունելի չեղաւ, առաջարկելով թէ ինչպէս նորա կալուածքն այնպէս և ամենայն ինչքն են արքունական, իսկ նորա ընչից և պարտուց տէրն եմ միանգամայն։

Ծիրաւի նա առնելու մեծ ձիրք ունի, իսկ տալու ոչ երբէք։ Ձշմարիտն են ասած—որ երկու շնորհք մէկ տեղ չի լինիր։ պարտապահանջք որքան և խնդրեցին դանկ մի անգամ չկրցին առնել անկէ։

Իսկ գալով Իւչ-Քիլիսէ վանքին, որ իբր պահապան հրեշտակ Բագրեւանդի մէջ իր արիւնչան միաբանաց շնորհիւ կանգուն կեցած, որպէս հաւ ընդ թեւօք զորպիս իւր ժողովելով երկրի տէրման և սուրբեան ժամանակին անապայ երթեւեկողներին և Թամուր փաշայի զօրաց ընդ միշտ հաց... կրմատակարարէր, որով ամենայն ինչ ապառելով՝ աւուր պարկեի կարօտ մնացեր էր,

Այսպէս Թամուր փաշայն ողջ գաւառը ճռաքաղ առնելով միոք բերեց փախստեայ ժողովուրդն. որոյ վասն Մամօ բէգ ամն առաքեաց յերևան առ Բէհպուտիով զօրապետն, խնդրեալ որ Բագրեւանդայ գաղթականներն ըստ օրինի յետս դարձուցանէ։ Նորին ժեծապատուութիւն չմերժելով այն՝ թէև

հրաման ըրաւ նորեկ ժողովրդեան յետ ուղարկել, սակայն ոչ ակամայ ոյքան որ կամայ։ Ուստի նոցա 1/3 հագիւ թուրք և հայ վերադարձան. մնացեալքն ըստ մասնէ պահանջելի գումարը հատուցանելով՝ մնացին անդ։

Ցայնժամ ոչ միայն այս տեղեաց հայքն՝ այլ նաև փոքուն հայոց, Աղձնեաց... հայ տարերքն տոչորէին որպէս ձուկն ի տապակի։ Մահմետ-Ռաշիտ փաշային բարձրագոյն հրամանաւ տեղւոյն տպատամբ քրդաց վրաններն գուն գործեր բաւնալ, մարտնչելով ընդ նոսա, որ մի համեստ հողագործ գաւառակարգ կազմեն որպէս հայքն են, իբրև մի պետութեան հպատակ հասարակութիւն՝ հաւասար իրաւունք վայելեն։

Սակայն ինձ թոյլ չտալով բուն նիւթէն հեռանալ, կընդհատեմ խօսքս դառնալով Բագրեւանդի վրայ, որը տակաւին չի ազատուիր այլ և այլ բախտախնդիրների ասպարէզ լինելէ դադրիլ։

Վերոյիշեալ Մամօ բէկը երեւանէն վերադառնալով ի Վաղարշակերտ գաւառապետի պաշտօնիս ուղարկեցաւ, ուր տիւ և գիշեր ծանր ծանր հարկապահանջութեամբք և բիւր ազգի տանջանօք կընեղէր զտեղացիները. որուն ականատես լինելով Գէր. Սիմէօն վարդապետ այլ և չկարողացաւ հանդուրժել առ այդ. Ալաշկերտու գաւառէն և եթ 358 այր հայ և թիւրք հաւաքելով ի Ջէտական գիւղ մի ժողով կազմեց և երկրորդ օրն նոքօք հանդերձ ուղևորեցաւ ի Կարին։ Թամուր փաշայի խորհրդով գնաց անդ և Մամօ բէյին, իր հաւատարիմ արբանեակը։

Ուր Սիմէօն վարդապետը իւրայնով քհանդերձ ներկայանալով կուսակալին, պատմեց նմա մի ըստ միոջէ ինչ որ գործուեցաւ ի Բագրեւանդ... Որով յատենի նորա յետ վեց ամիս քննութեան պարտաւորեցաւ Թամուր փաշային իրեններով մէկտեղ ձշմարտութիւնն երեւան գալով հաշիւ ըրին, որ միայն Մամօ բէգն ի Վաղարշակերտ իւր վեց ամիս պաշտօնավարութեան միջոցին կերած էր 315 քսակ փարայ, Թամուր փաշայինն ալ աստի պէտք է եզրակացնել, որին հաշիւ չկար, դի առածն գամ քան զգամ կուղարկէր ի Վան իւրոց, որից չնչին

մաս մը ժիայն հատուցանելով ի սակս պարտուցն պարսից, մնացեալն ընդ ամենը ինքն կըվճարեր։

Քանզի նա ի մոի ուշեր անդրէն չդառնալ ի Կարին, այլ փախչիլ ի Վան և ամրանալ որպէս յառաջն ի բերդն Տմորեաց, զՄկրտիչ վարդապետ առաջնորդն Վարագայ դեղակուր առնելուն ազագաւ։ Այր սակս որպէս ապստամբ կը շրջէր Բագրեւանդի մէջ. և յաճախ զինք կոչող կուսակալի հրամանն ստուձգանելով՝ չէր ուզեր երթալ անդ առ նա։

Սորա վրայ օր մի պարսից կարաւանի պարտուց փոխարէն այնչափ արաճձներն մարուելու համար. կըբերէ մեքենաբար Արծափու խեցետեղինօք մի ճամբուկ (խուրձին) կըկեցնէ պատառելաչափ և որպէս գրամ կը յանձնէ զայն Ապուէթ անուն անձի մի, որը տանելով՝ ըստ պատուիրանաց նորա մերձ ի Վազըշաւան, որ ի վերին Բասեան, պատռելով զայն կըթափէ խեցեաւներըը Արաքսի մէջ, Զօպան—քեօփրուի վրայէն, ուր Մուրց գետն խառնի. անտի գայժ ի բերան գնայ ի Կարին պատմել կուսակալին թէ—մնացեալ պահանջելի գումարն ի Թամուր փաշայէ, բերեցինք անկորուստ մինչ ի Քեօփրիւ-քեօյ, ուր տեղացիներէն պահապան խնդրեցինք նորա համար, չտուին, գիշերը գալով՝ գողացան։

Սակայն ոտի պոչն շատ երկայն չէ. եկաւ, հասաւ ժամանակն, որ հանգոյցը պարզուի։

Այս միջոցին Ալաշկերտ գաւառի Զէտկան գիւղի բնակիչ մի ծեր հայ մարդ Մուրատ անուն իւր մի ձեռքն մի ջուխտ ժանգոտած սուրճանակ, իսկ միւսովն՝ բռնած մի թուր բուսած այնտեղ, որը ընդհատելով նոցա խօսք, պատասխանեց կուսակալի հարցմանց։

Ծեր իմ, խնդրեմ փոքր ինչ շնորհք ընես ինձ լսելու, որ նոյնպէս մի շատ ցաւալի անցք պատմեմ ձեր մեծութեան, թող սիրտդ չվիրաւորի։

Տեղւոյդ կեղծ վաճառականներէն Խօրօզօղլի Մկրմկրը անցեալ գարնան գալով մեր տուն, մի օր հիւր եղաւ։ Գիշեր լինելով՝ մի խոր լացի ձայն եկաւ սենեակէն ի տուն ննջարանը՝ պարթելով՝ վազեցինք այնտեղ, որ այդ մարդը գլխաքարշ երեսի

վրայ ինկած, գլխուն ծնկներուն ծեծելով յափսիթերս կերթայ կուգայ։ Երբ ուշեցինք իմանալ իրողութիւնն, հետևեալ նախադասութիւնով բացատրեց իւր կսկիծը, «Հազիւ թէ քունը աչքուննիս կոխած էր, պարեգօտի քսակս կորեր, մէջի 15 քսակ ևս գէնքերս վերուցեր, անյայտացեր են»։

Ցեր իմ ապշած մնացինք, ասոր դուռ մը չկրցինք գտնել՝ քանզի դուռը, երթիկը գոց, գէթ մի մարդ ներս մտնելուս չափով ջրհորի երթիկը քանդուած և ուրիշ ոչինչ։ Վաղ քաջ ընդարշալոյն գնաց մեր գաւառապետին ի Թօփրագգալէ և տեղական կառավարութեան բողոքեց մեզ վրայ։ Ոստիկաններն եկան ինձ և մշակս, որ միայն նորա մօտ սենեակին կից գոմն էր պարկած, քունեցին, տարան գլխին ծակը, ոտքներնիս կոճղի մէջ, պարանոցնիս շղթայի զարկած։ Մեզ հաց ու ջուր տուող չկար, մերթ ընդ մերթ պատաւ կինս փոքրիկ մանկիկս ընդ առաջ ձգած մի ամման կերակուր կամ հաց կըբերէր կերթար։ Ի՛նչ գլուխ յաւցնեմ, վեց ամիս առանց հարց ու փորձի այստեղ մնալէ զկնի, մեր տան դուռը փակ թողած, նոր մի օր Բայէզիտէն հոգեառ հրեշտակի պէս եկաւ մեզ մօտ քննութեան։ Թէ դուռ այն բանէն տեղեակ եա, մեք ալ նոյնպէս. կուզէ որքան ստիպես, ինչ կելլէ չոր փայտէն։

Հրամայեց իսկոյն մի խուրջ հաւկիթենէ կակուղ վարոց բերին այնտեղ, նախ մշակի ոտներն դրին ֆալաղէն և երկու զօրաւոր անձինք ամենայն զօրութեամբ սկսան ղարնել։ Ինքն փաշային հեռու նստած էր, որ խեղճի ատորին մատից ալբերակի պէս դուս ծորող արիւնն վրան չըցայտեր, ոտից երակներն ու միս փայտից պլլուելով՝ վեր կելանէր։

Վերջապէս ահաւոր էր տեսարանը. թոքը բերանս չորցած էր, երբ ծեծն դադարեցուցին։ Սառն ջուր որսկելով երեսին, յետ օգուտ ժամուց զարթեցուցին զնա ի մահամերձ քնոյ, որին մերձենալով Բահլուլ փաշային հարցուց նորա հաւնար։ Եթէ նորա տեղ մի անշունչ առարկայ լինէր, դարձեալ լեզուս պիտի հլնէր։ Նա յաւի կսկիծէն մի քանի անգամ՝ հեծկլտալով թոթովեց։—մեռայ ի սէր Աստուծոյ ապատեցէք ինձ։ գտանելով Զ. գիւղ Զլօի Աւգալի փողոց աղբևսակոյտի մէջ պահած եմ։

խօսքը բերնի մէջ մնալով ձեռքից գնաց. գետին փռուելով՝ եօթ տարուայ մեռելի գոյն առաւ։

Նուաստ նահապետական մի ծանր մեծ սայլ բերին, որ մի զոյգ գոմշից մի զոյգ եղներից էր լծուած, բարձին վերան, քշեցին դէպ յայն գիւղ, իսկ խօրօզօղլին հեռուն կեցած, քթի տակէն կրծծիծաղէր։

Ցիշեալ փոլոցը, որ դարաւոր աղբը կուտուած էր, տակն ու վրայ ըրին, մաղեցին ոչինչ գտան, նման առասպելեալ լերան՝ բազում արձագանգէ վերջ, չնչին մուկ մը ալ չծնաւ նա։ Վերսին բերելով մշակն (Աբուզօ այս էր նորա անունը) բանտին մէջ ինձ մօտ պատկեցուցին։

Սոյգ որ ոչինչ դրուած չէր այն և ոչ ուրիշ տեղ. ծեծէն ազատուելու համար, նա սուտ խօսեցաւ։

Հազար բերան գոհ եմ էն Աստուծոյ անէն, որ ինձ էլ անոր օրին չհասուցին. փոյթ չէ թէ իմ շարժական և անշարժ կայքը աճուրդի հանելով՝ չնչին գնով ծախեցին, տուին խօրօզօղլուն։

Նա առնելով ուրախ ուրախ անյայտացաւ, իսկ մեք ընդհակառակն մեր կեանքն փճացնելով՝ հազիւ ազատուեցանք մահուան հրրանդներէն, մեր ընտանեաց աղաղակին չափ ու սահման չսահմանելով՝ որին ենթարկուած էր ինքն զրպարտիչը։

Բայց չիք ինչ ծածուկ, որ ոչ յայտնուցի. անցեալ աշնան վերջերին մեր անասնոց տաք ջուր տալու պատճառաւ, մեր ջրհորի մէջ, զոյն մաքրած ժամանակ՝ գտանք այս սուրն ու աորճանակներն, որ խօրօզ օղլուն է եղած։ Ինքն դիտմամբ այդ ըրած էր, ինչպէս և շատ տեղեր ալ, որ վերջերս յայտնուեցաւ. մեծամեծ անեղ աւերելով մեծ հարստութիւն ձեռք ձգելու համար։»

Այս արտաճմիկ պատմութիւնը առիթ տուաւ Աստատ փաշային Թամուր փաշայի դրամատարները բանտարկելու. զորս գանակոծելով՝ ճշմարտապէս խոստովանեցան իւրեանց յանցանքը։ Սոքա իրենց արժանի պատիժն ստացան ինչպէս և խօրօզօղլին. ամենայն ինչ ըստ կարգի անօրինութեամբ։

Այս արդար վճռէն... դուրս է Թամուր փաշային, զոր կաշառութիւնը զայն և ևս ձերբակալելու եանէ է։ Չէ, արդա-

րութեան ձեռքէն ոչ մի էակ չի պրծնիր, երբ օրինազանցն վնգռող լինի։ Անոր ալ ժամանակը կայ։ Ահա ձմեռն եկաւ, յորդառատ ձիւնը ծածկեց բոլոր հիւսիսային ցուրտ երկիրները՝ ճանապարհք գոցուեցան։

Մինչ ատի յառաջ կուտակալն կը վախնար նորա փախչելէն. այժմ՝ ցինու զօրութեամբ տանելով առ յինքն բանտարկեց զնա ևղհամայն համախոհս նորա։

Փոխանակ նորա Խախ փաշային իշխանութիւն տուած գնաց ի Վան և նոյնպէս Բահլուլ փաշային վերատին նախկին իշխանութիւն իւր ի Պայազիտ և Սիմէօն վարդապետ իւրայնով ձանդերձ ի վանս իւր։

Յետ այնորիկ Թամուր փաշայի ընտանիքն ևս աքսորելով ի Կարին կնքեցին զդրուն նորա, գրաւուեցաւ նորա ամենայն ինչքն ալքուշի հրամանաւ և առաւ անձնիւր տեսրդ իւրեանց, զոր ի նոցանէ պատրաստ օրինաց առած, իւրացուցած էր։

Իսկ մնացեալ 4000 քսակն՝ Թամուր փաշայի գալով ի Վաղշակերտ, անդ ձմերոյ Զիլանցի, Սիպկի... քիւրտ ցեղերից նոյն պարտուց փոխարէն, առաւ նոցա բովանդակ անասունքն... իրենց մեծամեծ չարագործների հետ ուղարկեց ի Կարին, ինչպէս որ խոստացած էր։

Ջանղի սոքա ըստ ամի ամի սովորութեանց իւրեանց, գալով յամարանոցայ Հայոց տանց մէջ տեղաւորուեր. անոնց արդար վաստակն առնելով նոցա ձեռքերէն՝ ուզածներուն չափ կուտէին և կըթռէին իրենց անասունները։ Գէթ ինքն երկրի կառավարիչ փաշային նոցա փոխարէն ի քրդաց կոտանար ուռած, կերցրածներնուն գինը փոքր ի շատէ, որպէս որ քիչ մը յառաջ խօսեցայ։

Իսկ այժմ թանզիմաթէն ի վեր օսմանեան կառավարութեան շնորհիւ այս բաներն վերցած են և Հայք ինչ ինչ արտօնութեամբք ապահովեալ են։

Յիշեալ ցեղերն գարուն գալով՝ ազատուեցան, արդարութեան ձեռքից փախնելով՝ Հիւսէին աղայի... առաջնորդութեամբ չուեցին պարսկահայաստանը անցան։ տանելով իրենց հետ երկու գեղատեսիլ հայ աղջկունք։ Մարգարիտ և Գիւլլի-

զար, որոնց Հ. ազգայն Շիրակաւանէն երբեմն գերի բերած կը-պահէր իր մօտ։

ՊՕՂՈՍ Ե. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՕՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ.

(Շարու-նակելի).

Այժմ մօտենանք եկեղեցիներին։

Նոքա երկու են և միմեանց կից, երկուսն ալ փոքր են կրա-շտազ և սագաշէն։ Հիւսիսայինը հասարակ, իսկ հարաւայինը սրբատաշ քարից. հիւսիսայինը մի և կէս արշինով երկայն է միւսից։ Հիւսիսայինը ունի մի գուռն արեւմտեան պատում և երկու լուսամուտ՝ արեւելեան և արեւմտեան պատերում։ Ծա-տակը կոկած է աւազակրով։ Աւագ բեմի վերայ քազմեցրած է վէմ քարը. հիւսիսային պատում ունի մի խորան փոքրիկ բե-մով։ Հարաւային պատի մէջ մի գուռն տանում է հարաւային եկեղեցու մէջ։ Նա չունի ոչ աւազան և ոչ արձանագրութիւն։

Հարաւայինը ունի արեւմտեան պատում մի մուտք, ուր կա-խուած է փայտեայ դուռը. հերկեր գիւղի ժողովրդի շինած. լուսամուտները զուտ ունեն արեւմտեան ու արեւելեան պատերում։ Ծատակն աւազակրով կոկած է։ Մէջին որմնափակ բոլորակ սիւնը քաժանում է աւագ բեմը երկու հաւասար մա-սի իբրեւ ցառանձնակի վէմ քարերով։ Աւազան և խորան չկան։ Տանիքի հարաւային կողմը բաւականին վնասուած է։ Արտաքին զարդերից ուշադրութեան արժանի է հարաւային պատի արեւելեան ժամացոյցը հայկական տառերով մանանմբ եղ-ծուած. Արեւմտեան լուսամուտի վերը փորագրած է կառուցի ար-ծիւ, որ մագիլների մէջ սեղմած է մի խոյ։ Սորա շուրջը գրած

է ։ Թվին ՉԼԱ. (731)։ Սորանից ոչ հեռու մի արձանագրութիւն արդէն մաշուել է։

Եկեղեցիների հիմնաքարը, որ ժայռի մի մասն է, ճեղքուելով կազմել է մի բեկոր և սպասում է ժամանակի ազդեցութեան կամ մի թեթև երկրաշարժի, որպէս զի նետուի ցած իւր հետ տանելով եկեղեցիների շինութիւնը։ Հարաւային եկեղեցին ունի իւր ներսն և դուրսը շատ արձանագրութիւններ, որոնցից մի քանիսը Չալալեանի գրքի մէջ չյիշած լինելով՝ արտագրում եմ այստեղ։

Արեւմտեան դռնից դէպի հարաւ, արտաքուստ, գրած է «Թվ. ՉԸ (708) ես Ստեփաննոս Սիւնեաց արհի եպիսկոպոս զմեր հայրենի գիւղն Չակոշ իվանս սուրբ ուխտս տուաք հայրենիք ի-ր-վ ձ-պ-վ-ղ-պ-վ ի յիշատակ հոգւոյ իմոյ՝ ով որ հակառակ կայ ՅԺԸ (318) սուրբ հայրապետաց նզոված։» Ո՞վ է այս Ստեփաննոս եպիսկոպոսն և ի՞նչպիսի այժմ անյայտ գիւղ է ընծայել վենաստանին։ Սա գուցէ լինի այն եպիսկոպոսը, որ Օրբելեան Ստեփաննոս եպիսկոպոսից 25 տարի առաջ գահակալում էր Նորաւանքում։ Հետևեալ արձանագրութիւնն առաջինի տակ այս է «Ես Յակոբ միաբանեցայ սուրբ ուխտիս, միաբանք Ա. ժամ սահմանեցին սուրբ Յակոբի տօնին։»

Ներսի արձանագրութիւնները Չալալեանի գրքի մէջ շատ աղաւաղած են և ամենակարևոր արձանագրութիւններն անգամ կիսատ պռատ լինելով հարկադրուած եմ արտագրել յիւվին. իսկ միւսներն ուղղել միայն։ Հարաւային պատի վերայ գրած է «Կամաւն Հզօրին Աստուծոյ սյս գիր յիշատակի և արձան անջնջելի մեծաշուք պարոնին Վարհամայ, որդւոյ Վասակայ, թոռն մեծին Մոգիստրոսի և բարեպաշտուհոյ Սանդզոյ ամուսնոյ իւրոյ և գեղեցիկ պտղոյ նորա Ուքանայ և քաջազօրին և մեծ արապտին (գուցէ սպարապետին) Վարհամայ և քրիստոսասէր մաւրն իմոյ Մամքանայ և բարեհոգմիկ աւրիորդ ամուսնոյն իւրոյ Գոնցային, որ մեծաջան աշխատութեամբ շինեցին զեկեղեցիս և բազում սպասիւք զարդարեցին յաղագս արքայութեան իմոց և երկարութեան կենաց ամուսնոյ և զաւմիցն իւրեանց Ուքանայ, Հասանայ . . . նուէրքս ի սուրբ ուխտս

ղբարաթաղին այգին վերին հատուկն . . . . կոռ արտով . . . եզրն որ մեծ առինէ գնալա ի վերոյ ... ընկոյզին յերիցս կալեր ջէն Գ. Հող ոչըրբարբ . . . կոզճիքն մինչև վանքն և մեծապատիւ (գուցէ) հատուցաք բար պարոնացն Դ. մաս . . . Դ. պատարագ Ուքանայ . . . զատկին, Դ. Մամքանայ վարդ . . . կատարեն, ով խափանէ դատի յԱստուածոյ . . . մարմնով. թվ. ՉԼԲ (732) գրեցաւ։։

*Արևմտեան պատից գէպի հիւսիսայինը ձգուում է հետևեալ արձանագրութիւնը։ «Կամաւն հզօրին Աստուծոյ ես Սմբատ որդի Լիպարտի յազգէն Աբրպելէնց որ ի Մար (գուցէ Մսուր, Եգիպտոս) գերի կացի, Աստուծոյ կամօքն ազատեցայ . . . զամուսին իմ Ոխիթոգ (ի՞նչ է) . . . որ յետ Բ. ամի փոխեցաւ . . . և յետ եղբարցն բաժանեցայ . . . . ինձ հատաւ ես Սմբատ գԴուինքթին . . . հողն սուրբ Աստուածածնին անչարութիւամբ վարդապետաք և միաբանքս ետուն ամեն . . . համբարձմանն Ա. ինձ Սմբատիս . . . ով իմ աղգէս կամ յօտարէն . . . եկեղեցոյս . . . Աստուածոյ ամենակալ բերանէն նզոված եղիցի և ՃԺԸ հայրապետաց կտպած. ի թվ. հայոց ՉԿԶ. (766)։ *)։*

(*) Աւելորդ չհամարեցի դնել այստեղ Զալալեանի գրքի մէջ եղած արձանագրութեանց գլխաւոր վրիպակները։

Զալալ. Ճանապարհ. հ. Բ. եր. 140.	ՍԽԱԼ.	ՈՒՂԻՂ.
Արձանագր. Ա.	...Քինչ այլ հոգւոյ բաժին չէր։	Քինչ այլ հոգւոյ բաժին կէր։
» Գ.	... Թևէքիս... թվ 2Ի...	...Հուքին...թվ. 2Խ...
» Դ.	... Զասրանոցիս չարէքն ի հիւանէն.ս-	...Զսրանոցիս չարէքն ի հիւանէն...
Երես 141 արձ Բ.	Սուրբ Սիօնի տակի հողն... առաք.	Սուրբ Սիօնի տակի հողն վարդապետենց առաք.
» Դ.	Իմ որդիքս Սարգիս Լահեր.	Ես Սաթուն, իմ որդիքս Սարգիս, Շահերշ, և այլն.
» Ե.	Ամադենայ որ տղերօք ի Քրիստոս կամեցան դիփի սուրբ գիրքն.	Ամադինայ որ տղաբուք կամեցաւ անդ ի սուրբ գիրքն.

Տաճարիս կղկղանաբար պատմութիւնը կազմելու համար դիմեցինք արձանագրութեանց, որոնցից այդ նպատակի համար նշանաւոր է վերը յիշած Մագիստրոսի թուն վարչամ իշխանի և նորա Գանձայ ամուսնոյ արձանագրութիւնը, նորա իւրեանց որդւոց Ուքանի և Հասանի կենաց երկարութեան համար բարեջան աշխատութեամբ շինել են եկեղեցին 732—1283 թուին և զարդարել են նորան շատ սպասներով։ Այդ տաճարի արևմտեան լուսամուտի վերը արծուի շուրջը գրած է թվ. ՉԼԱ. (731—1282)։ Այս երկու թուականները ցոյց են տալիս եկեղեցւոյ շինութեան տարին։

Երբ վարչամ իշխանի թուականը համեմատենք Սուրխանոս արքի եպիսկոպոսի բերած թուականի հետ (708—1259) կգտնենք 4ասնևըբա փոքի տարբերութիւն։ Ինչպէս բացատրենք այդ եօթ վերջին թուականից հինը չըկայ այս տեղ։ վարչամի արձանագրութիւնը ցոյց է տալիս ուղղակի եկեղեցին կառուցանողներին և թուականը. հապա հինգ 24 տարի շինութիւնից առաջ երևացել է Սուրխանոս եպիսկոպոսի արձանագրութիւնը։ Ենթադրել ուրիմն պէտք է որ կամ եպիսկոպոսի յիշեալ թուականը սխալ է կամ թէ եկեղեցին շինած է եղել այդ այս թուականից շատ առաջ և վարչամ իշխանի ժամանակ նա ենթարկուել է վերանորոգութեան։ Այս հանգամանքը բացայայտ կերպով ապացուցանում է հանգուցեալ Աբէղ Սրբեպիսկոպոսի սխալը, որ այս տաճարի կառուցման տարին որոշում է 1321 թուականին. *)։

Երես 142. արձանագ, Ա.	Ռոշարաթի հողն ջաղացի գուռն տուի սուրբ Աստուածածնիս.	Ռոշարաթի հողն ջաղացի գուռն տվի վախմ սուրբ Աստուածածնին.
» Բ.	Ես Գրիգոր Դուփին Ծաւրնջ Խաչի տաւրի այգին. Բ. պատարագ կատարիչք	Ես կամեան Աստուծոյ Գրիգոր Դուփին որդի Յովհնջ խաչի տաւրի այգին... Բ. պատարագ Ամենայ կատարիչք.
» Ե.	Ես Աղբարս կանգնեցի.	Թ. ՉԽ (740) ես Աղբարոս կանգնեցի.

(*) Արարատ. 1873 թ. Հոկտեմ. Ժամանակագրութիւն շինութեանց վանօրէից.

վիճելի մի խնդիր յառաջ է գալի նաև տաճարիս կոչման մասին: Ջալալեան արքեպիսկոպոսի գիրքը մկրտում է նորան «Սուրբ Սիոն»*) և մինչև անգամ օտրան է ընդունում Որբերեանի պատմութեան մէջ յիշած Սիօն վանքն, որ պայծառացնում էր ճգնաւորը մարդկանցով ու թերորդ դարի առաջին քառորդում: Եւ գուցէ նորանից օրինակ առնելով նոյն Սուրբ Սիօն անունը տալիս է և Աբել Արքեպիսկոպոսը**): Բայց այդ անցնելով սոյն վանքի բոլոր արձանագրութիւնները իբրև ամէն եղրակացութեանց միակ ապրիւր, մենք կտեսնենք որ «Սուրբ Սիօն» բառերը յիշուում են երկու և եթ արձանագրութեանց մէջ այս ձևով, «առաք սուրբ Սիօնի տակի հողն և տուաք Սուրբ ուխտ:» Միւսն այսպէս «իմ որդիքս Սարգիս, Շահերշ զմեր սուրբ Սիօնի տակի հողն ի սուրբ ուխտս տուինք: Ենթադրում եմ որ Սիօն բառը գործ է ածուել որոշելու ոչ թէ տաճարի անունը այլ նուիրած հողերի տեղերը:

Հակառակ կարծիք հաստատելու համար նայեցէք Սմբատ Աբրահամեանի վերը յիշած արձանագրութիւնը «ղԴուինքթին... հողն Սո՞ւքը Աստուածածնին անչարութեամբ.» կամ Հարուստային պատի արտաքուստ արձանագրութիւնը «Կամաւն Աստուծոյ ես Սերոպէ Արեղէս տաի զԹուշարաթի հողն ջազայի դուռն տաի վոհմ Սո՞ւքը Աստուածածնին, ով հակառակի անիծած է:» Պարզ չէ ուրեմն որ տաճարի անունը Սուրբ Աստուածածին է և ոչ սուրբ Սիօն: Բայց թէ ո՞ւր է Սիօնը, որի տակի հողերը նուիրել են այս տաճարին, ես այդ չգիտեմ: Ձգիտեմ նոյնպէս թէ երկու կից եկեղեցիները միևնոյն անունն են կրել, թէ առանձին անուններ. ի՞նչ է հաստատակ եկեղեցու անունը, մի՞ գուցէ նոյն է սուրբ Սիօնը: Սակայն այդ հաստատելու համար չկայ ոչ մի յիշատակութիւն:

Սուրբ Աստուածածին եկեղեցին ունի իւր պատերի վերայ ներսից և դրսից հինգ անթուական և տասն թուականով արձանագրութիւններ: Վերջինները կազմում են աւետանվէց տա-

(*) Ջալալ. Ճանապարհ. հ. Բ. երես 140:

(**) Արարատ 1873 հոկտեմ:

բերդքան, այն է 708 թուականից մինչև 794 հայկական թուականը։ Ամբողջ 86 տարի եղած են սոյն վանքում նուիրատուութիւններ։ Սոցա թուում եղած են Զակոշ գիւղը, ի-ը ժողովրդով, մի սրանոցի (ձիթհանի) քառորդ մասը, ուխտը կատր հող և եթեք այգի. մինը Առինջ գիւղում։ Ո՞ւր են այժմ արդեօք Զակոշ գիւղը, Սիօնի տակը, Բոշաբաթ, Գազաբափոս, Կաւարտին, Աղջլատափ, Բամբակ հող և այլ տեղեր, այդ անկարելի է այժմ որոշել։ Բայց Հերհեր գիւղից արևելք, բերդաբլրի արևելեան ստորոտում մացառուտ հովիտ մէջ բղխում է բաւական առատ հանքային երկաթաջուր։ Մի գուցէ տորանից առնուած Աղջատափը լինի այդ հովիտը։

Մի հետաքրքիր երևոյթ. նուիրուում է Սուրբ Աստուածածնին եկեղեցւոյն Զակոշ գիւղը ի-ը ժողովրդով։ Ամբողջ Դարալագեազի հնութեանց մէջ միայն երկու տեղ է յիշուում որ գիւղը նուիրուում է իւր ժողովրդով, մինը այս Զակոշ գիւղն, միւս Զիլայ գիւղի վերաբերութեամբ. վերջինս նուիրուում է Ամաղուի Նորավանքին։

Սուրբ Աստուածածնի նուիրատուներն կարգում եղած են իւր ժամանակին նշանաւոր մարդիկ. այն է Սիւնեաց սրկի եպիսկոպոս Աստեփաննոսը, Վահրամ իշխանը, նորա որդի քաջ զօրավար Ուքանը, Սմբատ Աբրպելեանը. Տարօնոյ իշխանի փեսայ Դուփենց Գրիգորը և այլն։ Ապա ճի են վանահայրերը, միաբանքը, եկեղեցական դասը, որոնք զարդարում էին այդ վայրը և հրապուրում էին յիշեալ նուիրատուներին։ Տարաբաղդաբար՝ մեզ հասած արձանագրութիւնները չեն յիշում նոցա։

Դիմելով տապանաքարերին, մենք տեսնում ենք նորանց 1559ից մինչև 1649 թուականները։ Ուրեմն թէ այս քարերը և թէ այն գերանը, որ ամրացած է պատակի տակ և որի մասին յիշուեցաւ վերը, ապացոյց են որ այժմեան աւերակ, ամայի, անտէր և անտիրական եկեղեցիները ունեցել են կենդանութեան հետ նշոյլ նաև մինչև Դարալագեազի վերջին աւերումները։ Եկեղեցւոյն երեք մնակի, այն էլ շատ հազիւ, այցելում են մօտակայ Հերհեր գիւղի հայ ժողովուրդը, ուխտ են անում, ճրագ են վա-

ուսմ, խանկ են ծխում և աղօթում: Որոշակի ուխտի օր չունի:

Ինչպէս արձանագրութիւններից տեսանք վերը, տեղւոյն իշխան Վարհամ իշխանը և իւր ամուսին Գոնցայն կառուցանելով (կամ նորոգելով) Սուրբ Աստուածածնի եկեղեցին զարդարել են սպասներով և նուիրել են հողեր: Վարհամի իշխանաւորութեան մասին յիշուում է իւր՝ Վարհամի, նորա կնոջ Գոնցայի և սորուն գրելի Շաշ միայնակեցի արձանագրութիւններից: Սակայն նորա իշխած երկրի սահմանները յայտնի չլինելով՝ հաւանական է որ Հերհերի գետի աւազանից աւելի չպէտք է լինեն: Վահրամ և Գոնցայ ամուսինները ուշնեցել են երեք որդիք. Ուքան, Հասան և Ամադին: Հաւանական է որ Ուքանի մարմինը հանգուցած լինի Ղօշավանքի Սուրբ Աստուածածնին եկեղեցում (գլ. Լէ.) 775—1326 թուականին, գեղեցկաքանդակ տապանաքարի տակ գեղեցիկ արձանագրութեամբ «Զայնիւն յընտրեալն և զքաջն ի զօրականն զպարոն Ուքանն յիշեցէք. թվ. ՉՀԴ (775):

Վերջապէս թողնում եմ այս վայրը և գետակի հոսանքը բռնած՝ իջնում եմ Հերհեր գիւղի վերայ: Ճանապարհն և ամբողջ դաշտավայրը այնքան քարոտ է, որ արտօրայիկ քարիրը ժողոված նորանց եղրների վերայ՝ հազար տեսակ ձև ի և ուղղութեան յանկապատեր են ներկայացնում վարելահողերի շուրջը: Այս քարերը Դալիկ-թափայի այն արտավիժմունքն են, որ ձգել է դէպի հիւսիս և արևելք:

Մտնում եմ Հերհեր գիւղի մէջ, Փարի առաջնութիւնից՝ բնակչաց տները, շինութիւնները, պարսէզների ցանկապատերը՝ բոլորը քարից է: Փողոցները ծուռ, ոլոր մոլոր, ինչպէս միւս գիւղերում, տակը քարոտ, վերը քարոտ միով բանիւ ամենայն տեղ քար: Գետակը քերում է գիւղի եղրը: Հերհերի բնակիչները խառն են՝ հայ և թուրք: Հայք կազմում են 18 գերդաստան 200 արական և 180 իգական անդամներով, ընդամենը 380 հոգի, իսկ թուրքերը 610 հոգի: Հայերը գաղթած են այստեղ Սիսիանու Սելու գիւղից, կարծեաք չինական թուականում:

Սէյալ մականուն՝ Պետրոս Մաղաթեանը դիտմամբ դրանց բնակեցնելով Հերհերում, մտադիր էր՝ իբրև տեղական կառավարիչ՝ մի քիչ ժամանակից յետոյ գաղթեցնել այդ տեղից թուրքերին հայերի ազատութեան համար։ Սակայն նորա պաշտօնով տեղափոխուիլը արգելք եղաւ իր մտադրութիւնը իրագործելու, ուստի հայերը մինչև այսօր մնային թուրքերի հետ խառն։ Ամբողջ Դարալագեազում այս միակ գիւղն է որ պատահմամբ հայերը խառնուել են թուրքերի հետ։ Սրկու միմեանց հակառակ տարրների խառն կեցութիւնը այսպէս մեծամեծ չարիք են յառաջանում՝ ի վնաս քաղաքականութեան և տնտեսութեան հայ համալրնակիչների։ Գանիկս անգամ խելք հայերը կամեցել են առանձին գիւղ կազմել, բայց հողի սակաւութեան համար Դարալագեազում ոչ իրաւունք են կարողացել ազատ հող գտնել տեղափոխուելու և ոչ էլ թուրքերը մտադիր են թողնել քաղքարտա հերհերը։

Փլուզի եզրում, ժայռի գլխին, գետի վերայ կանգուն կայ հին, երկայն քարաշէն եկեղեցի, որի մէջ կատարուում է ժամասացութիւնը հերհերի հայ ժողովրդի համար։ Փլուզի հիւսիսային կողմում, փողոցի վերայ, փոքր պարսիպի մէջ՝ անկարելի է, որ իւրաքանչիւր ճանապարհորդի աչքին չզարնի իր մեծութեամբ՝ քարէ պատուանդանի վերայ վեց ամբողջ գաւազան կանգուն մի արձանագիր այս գրութեամբ, «Ես Գրիգոր որդի Վարհամայ Հայրին որ մնաց ի պատերազմին հասի կանգնեցի խաչս յիշէք ի Քրիստոս. թ. Ձ.Ա. (731)։»

Սոյն այս արձանիս ոչ հեռու մի հայ շինականի տան բակում քանիցս անգամ ինձ ցոյց են տուել մի գեղանափոր ճանապարհ, բերանը քարակոյտով ծածկուած, որի խորքերը թէպէտ չեն երևում, սակայն մէջից շարունակ լսուում է քամու որընթաց սաւը հոսանքը։ Հերհերը եղած է երբեմն բազմամարդ տեղ։ Ամբողջ հինգ վերստ տարածութեան վերայ հերհերի շուրջը ախուռած են տների աւերակներ, ընդարձակ հանգստարաններ բազմաթիւ մնհարձանիերով, կանգուն և տապէն խոնարհուած խաչքարեր։ Սակայն տների աւերակները հայկական չեն, ինչպէս պնդում է Ջալալեանի դիրքը, այլ հասարակ քարը քարի վե-

բայ գարսան, կոշտ և կոպիտ գիւղական աներ։ Բոլոր այդ հնութիւնները գուցէ մնացել են մի քանի կիսոյ գիւղերից, կամ գուցէ եղած է մի ընդարձակ աւան։

Արգեօք ի՞նչ է այս գիւղի նախկին անունը։ Հերհեր կոչումը ոչ մի յիշատակարանի մէջ չէ երևում. բայց Օրբելեանի գիւղօրէից ցուցակի մէջ յիշուած է Սղերդ գիւղ, որի նոյնանիշիւն կոչումից ես եզրակացնում եմ որ այժմեան Հերհերը կարող է լինել նախկին Սերդն։

Հերհերի դէմ հանդիման, գետի արևելք, գետակի ձախ ափից բաւականաչափ հեռու իւր գագաթը ի վեր ամբարձած կանգնած է մի վիթխարի բլուր, որ իւր շրջապատ լեռներով հանդերձ կոչվում է Գէօգչայ։ Բլուրը և նորա շրջապատ լեռները, որոնց մեծ մասը ձորերով, հովիտներով և բարձրաթիւններով տարածուում են գետի արևելք Արփատայ գետը և գետի հիւսիս—Մուրադ Թափայ լեռնային ապառաժին՝ այդ բոլոր տարածութիւնը ծածկուած է վայրենի անտառով։

Ցիշեալ բլուրի գագաթը բարձրացած մենք այնտեղ կընկատենք միմեանց վերայ դարսած մեծամեծ քարերից շինած շրջապատ պարսպի հետքեր, երևում է, որ այդտեղ եղած է երբեմն բերդանման պատնապարան, բայց փոքր դիրքով, առանց բերդերին յատուկ պարագայից, այն է առանց հորերի, սենեակների, ջրամբարի և այլն։ Կայ միմիայն մի մատնանման հատարակ շինութիւն, իւր երեք խաչքարերով, որոնցից միևը կրում է այս արձանագրութիւնը «Ես մարգարէս որդի Գագիկ երիցոյ աթոռակալի կեցոյ (եկեղեցոյ) կանգնեցի զխաս (չս) թվիս ՈՂԶ։ (696)։»

Վայրկ ձորի որ բերդն է արդեօք նա, զի կարելի արդեօք ենթադրել որ նա լինի Կապոյտ քերդը, որ թուրքերը բառացի թարգմանութեամբ շինած լինին Գէօգ դաղ։ Կապոյտ բերդը յիշուում է Օրբելեանի պատմութեան մէջ *)։

Բերդաքերի գագաթում կանգնած հսկայք ձգելով շուրջն, ես տեսնում եմ Հերհերը նորա արևմտեան ստորոտում։ Նա-

(*) Օրբ. պատմ. տանն Սիս. գլ. Գ։

րանից հեռու Դալիք-Թափան է իւր մծոտակայ բարձրութիւն-
ներով։ Դէպի հիւսիս անուտաստպատ բլուրներ են և հովիտներ
և շատ հեռու Մուրադ Թափայ սարն է։ Դէպի արևելք—նոյն
անուտաստ լերանց շարունակութիւնն է, որոնց խորագոյն
ձեղքուածով հոսում է փրփրալից Արփաչայը և սորա ափում
բերդի հանդէպ Գնդեվազ գիւղն Գնդեվան վանքով, Դէպի հա-
րաւ նոյն անուտաստ լեռների և Արփաչայի շարունակութիւնն
է, որից այն կողմը կապուտակ երկնքի տակ նոյնչափ կապոյտ
նազիւրդը իւր սոսրոտի գիւղերով։ Բերդասարի արևելեան
սոսրոտում, հովտի մէջ, բղխում է հանքային ալբիւրը կարմ-
րաներակ գիծ թողնելով իւր հոսանքում երկաթադի իջուածքից։
Սորա մասին էր վերն ասած խօսքս, որ գուցէ այստեղ լինի ա-
պաջրատեղը։

Լեռնագագաթից աստիճանաբար իջնում եմ հարաւարև-
մտեան լանջով։ Մի ահագին բեկոր բլուրի ժայռից պոկուելով
հին տարիներում գլորուել է սոսրոտում՝ ճակատը Հերհեր
գետակի վերայ։ Ոմն կրօնաւոր Գրիգոր անուն թողել է մեզ
այդ բեկորի վերայ մի երկար արձանագրութիւն, վերջը ջնջուած
և անորոշելի։ Ահա նորա պատճէնը։

1843

«Ի թուականիս Հայոց ՇՂԲ (592) ես Գրիգոր անարժան կրօ-
նաւոր ի հայրապետութեան Յովհաննիսի մեծահամբաւ լուսաւոր-
չի եկի ի տեղի յայս և բնակեցայ ի տան մեծապատիւ քահա-
նայի Գագիկ երիցոյ՝ աթոռակալ եկեղեցոյ և իշխան ժողովըր-
դեան և եղէ ես ընդ ժառանգորդս նորա կացի ի միաբին և էր
պակասեալ քահանայ ի տանէ նորա ի բազում ժամանակաց
սարկաւագն տղայ հասակաւ էառ զպատիւ քահանայու-
թեան և կիսաւրեա ժամանակաւք փոխեցաւ առ Քրիստոս և
էած խաւար յետամնաց իւրոց և աշխնքրնոր խաւարեալ ի
յաչաց տեսութենէ և նա էր լոյս կենաց նորա շինչաւ մչնի
մեք զեկեղեցիս ի բարեխաւսութիւն հոգւոյ իմոյ և զաւգնու-
թիւն աշխատաւորաց ի հաստատութիւն մանկանս իմոյ Գրի-
գորայ և յաւաջուսմն Սարգսի վերակացի ժողովոյս և տանու-
տիրա . . . . . Սոյն արձանագրութեան մէջ յիշած Գագիկ երի-
ցու որդին է կանգնեցրել մի խաչքար բերդաբլրի գագաթում։

Ա յս տեղից թէև կարելի էր անցնել գետակի ա՛յ ափը և հերհէրի ճանապարհով գնալ Թրքաբնակ Բուլախլար գիւղը, սակայն ես ուռանց ճանապարհի, հովիտների և մացառների միջով գնում եմ դէպի հարաւ գետակի հոսանքի հետ։ Ա՛հա դուրս եկայ երկայնաձուն բլուրի գլուխը, որ մի ժայռոտ ծայրով գալիս կախուում է գետակի ձախ եզրի վերայ՝ հերհէրից ոչ այնքան հեռու։ Հենց այդ ժայռոտ բարձրաւանդակի վերայ ես նկատում եմ մի գեղեցիկ մատուռ, դուռը դէպի արեւմուտք, դէպի գետակը։ Ծայրի գլուխն այնքան սահմանափակ է, որ հազիւ կարողանում է զետեղել մատուռը։

Մատրան առաջ կայ մի հատ, այն էլ խոնարհուած, աւերակ դարձած սենեակ։ Զորրորդ կողմից (արեւմտեան) բոլորովին բաց փոքրիկ սրահը, իբրև նախագաւիթ մատրան, ունի մեծամեծ ամբողջական սալերից աւազատակ և ճակատ։ Սրահում կան երկու անարձանագիր տապանաքարեր։ Զորս քարէ աստիճանից բարձրանալով՝ ես մտնում եմ սրահից մատուռի մէջ։ Նախքան մտնելը՝ նկատում եմ դրան վերը փորագրած խաչ, որի ա՛յ և ձախ կողմում միմեանց հանդէպ կանգնած երկու առլաւնի։

Մատուռը շատ փոքրագիր է, պատերն ուխտաւորաց ծխից սեւացած, ունի փոքրիկ սեղան՝ պատի մէջ հագուցած փոքրիկ վեմ քարով։ Սեղանի կտմարաձև աւազատակի հիւսիսային մասում քանդակած է մեծագիր թռչուն։ Մատրան տարեթիւը, անունը, կառուցանողի նախատակը, մի խօսքով նորա հակիրճ պատմութիւնը աւանդուում է նորա հետևեալ ընդարձակ շատ լաւ և պարզ փորագրած արձանագրութեան մէջ։

«Կամաւն Հզօրին Աստուծոյ ես Շաշս միայնակեաց և հարազատ եղբայրն իմ Մաթուսին շինեցաք զսուրբ եկեղեցիս յաղագս փառաւորելոյ սուրբ Նշանիս, որ յանուն սրբոյն Գէորգայ զօրավարին, որ յաղագս հանդերձեալ արքայութեանն յուսոյն, բազմաչարչար աշխատութեամբ և մեծ ջանիւ ի յաւարտումն ածեալ կատարեցաւ ի թվին ԶՒՋ. (746) ի հայրապետութեան տեառն Սահակայ Սիւնեաց աթոռակալի և ի պարոնութեան այսմ տեղոջ գեղապանծ իշխանիս Վարհամայ և բարեպաշ-

տուհոյ Մանքանայ և ամուսնոյն իւրոյ Գոնցայլին և գեղեցկապուղ շուռաւիղացն Ուքանոյ և Հասանոյ, Ամիտղայ . . . (գուցէ Ամիհնայ) ձեզ սիրոյն Քրիստոսի յիշեցէք զնաշ միայնակեացս և զծնօղս իմ ի մաքրափայլ աղօթս ձեր և որ սպասաւոր լինիք փառազարդ խորանիս, պարտիք ինձ Գ. օր պատարագ ի տարին զսուրբ Գրիգորին, զՄանզարդարին և զաւագ հինգ շաբթին ինձ մնաձուկէք Նաշխս վասն սիրոյն Քրիստոսի անխափան և որ անվոյթ առնէք, գառաի Յամենակալ բերանէն Աստուծոյ։»

Նաշի մատուռէն գեղեցիկ տեսարան է ներկայացնում մեր աչքին դէպի վայր, դէպի գեւտակը և նորա գեղեցիկ ծառազարդ և ժայռապատ ձորը, որտեղից գեւտակի քաղցրիկ խոխոջիւնը քամու մեղմիկ ալիքների հետ հասնում է ականջիդ։ Գնալով դէպի հարաւ՝ ահա հասնում Բուշխլալը անուշով թրքական գիւղը։ Արդարև բուլախլար (աղբիւրներ)։ ըստորում գիւղի հիւսիսային կողմում՝ գեւտակի ափ ափում, վիթխարի քարակոյտերի տակից բղխում են ամենատաս, սառնորակ, վճիտ աղբիւրներ, որոնք հէնց ինքեանք կարծղ են կազմել մի լաւ գետակ։ Գիւղը նոր է և բնակիչք մեծ մասամբ քէգեր՝ գաղթել են մերձակայ գիւղերից։

Բուլախլարից ճանապարհն ընտրում եմ արդէն գետակի ափով։ Մի ժամից յետոյ եմ հասնում եմ թրքաբնակ Առինջ գիւղը՝ վերոյիշեալ գետակի վերայ։ Առինջը մի թշուառ գիւղ է, աղտոտ փողոցներով, գետնափոր տներով, անճաւ և անպարէզ տեսքով, բայց շնորհալի գոհ բնակիչներով։ Երբեմն եղել է այստեղ հայ բնակութիւն, ուր երևում է այժմ աւերակ եկեղեցի։ Վերջինից մնացել են մարգասչաի քարձրութեամբ քարաշէն պատերը չորս որմնակից սիւներով, աւազանով և ձախակողմեան խորանով։ Դուռը եղել է արևմտեան կողմում։ Սեղանի հարաւային պատուհանի շրջաքարի վերայ գրած է «Ամէն աստուած ողորմեա եղիսաբէթին։» Ահա առաջին և վերջին արձանագրութիւնը Առինջ գիւղի։ Այս գիւղի անուանը նոյնութեամբ յիշուում է Հերհէրի սուրբ Աստուածածնի պատի վերայ Դուփենց Գրիգորի արձանագրութեան մէջ։

Մի ժամ ևս գետակով դէպի յառաջ՝ մենք ալդէն կիջնինք Արփաչայի ձորը, ուրկէն իմ այս ուղղութեամբ ճանապարհորդելու վերջին կէտը։ Այժմ գնանք նորից Նարուբի սահմանը և այս տեղից մի այլ ուղղութեամբ կրկին բարձրանանք Դարալագեազի հեռաքրքիր լեռները։ Նախ քան այստեղից հեռանալը, պատմեմ մի դէպք ներկայ Ահինջի վերաբերութեամբ։

Մինչև 1853 թուականը Ահինջում բնակուում էր մի պարզ ազնուական թուրք՝ Շիրին Սուլթան անունով։ Նոյն թուականի Ռուս—Տաճկական պատերազմի հէնց սկզբում գաղտնաբար գալիս է Տաճկաստանից մի տաճիկ քարոզիչ—լրտես (կաւիդ) և անցնում է Ղարաքաղի կողմերը։ Նուշի քաղաքում լրտեսը ծանօթանում է ամն թուրք Զաֆարի հետ, այնտեղի բնակիչ, որին և պատրաստում է իւր նպատակի համար։ 1853 թուականի գարնանը՝ Զաֆարը լրտեսի հետ գալիս է Ահինջ գիւղը Շիրին սուլթանի մօտ, որին երկուսն էլ կարողանում են համոզել թէ Օսմանեան զօրքը յաղթական պիտի անյապաղ մտնելու է Ռուսաց սահմանը, վատնողոյ տեղական թուրք տարրը ապստամբութեան պատրաստելու համար կարևոր է Շիրին սուլթանի մասնակցութիւնը, որին և խոստանում են հրապուրիչ պաշտօններ, մինչև անգամ փոշտպանութիւն։

Շիրին սուլթանը համաձայնում է։

Գործին հաստատութիւն տալու նպատակով լրտեսը վերադառնում է իւր հետ Արզրում փաշային ներկայացնելու Նուշեցի Զաֆարին և Արգեազ գիւղի բնակիչ Պադիխ բէգին և Ալակպարին։

Այս երեքը շատ անփոյթ վերադառնալով Արզրումից՝ բերում են Վալիից Շիրին սուլթանին մի յանձնարարական նամակ և նուէր կարմիր մախուշէ վերարկու։ Այդքանը հերիք էր սուլթանին մոռանալ տալու իւր ստանձնած գործի չափազանց պժուարութիւնը և նորանից ծագած վտանգը։ Նորան իսկոյն շրջապատեցին նորա երեք եղբայրքը՝ Մամիշ բէգ, Հէյդարկուլի բէգ և Աբասկուլի բէգ, երևանի գաւառի Զոլին մհալի Ջամուշբաստան գիւղի բնակիչ Հիւսէյն կուլի՝ մականուամբ Թարի Թան-

մազ (Աստուած չճանաչող), նորա եղբայր Հասանը, Դարալագեազի Ջիւլ գիւղացի Հաշիմը, Ալիմարդանը և նորա որդի Օրուջը, Աչասեցի Սէյիդ Ահմադը և Սուլէյմանը, Կուրդուլախցի Մամարզայ, Հերհէրցի Խամայիլը, Զաֆարը և այլ տեղերից շատ մարդիկ, որոնցով կազմուեցաւ մօտ յիսուն հոգուց մի աւազակաբարոյ խումբ՝ Շիրին սուլթանի առաջնորդութեամբ։

Դարալագեազի թուրք տարրի առաւելութիւնը, երկրի աշխարհագրական յարմարութիւնը, Նախիջևանի (որի գաւառի մասն էր կազմում այն ժամանակ Դարալագեազը) գաւառական իշխանութեան թուլութիւնը լիովին նպաստեցին Շիրինի յանդուգն մտադրութեանը։ Աւազակ խումբն սկսեց իւր յարձակողական գործունէութիւնը, որից զարհուրուած թուրք և հայ գիւղեր ուղարկում էին Առինջ՝ բեռներով ալիւր, ցորեն, ոչխարներ, հաւեր, ձի, զէնք և այլ շատ պիտոյքներ՝ ինչ կըպահանջէր խումբը։

Եթէ գիւղերից մինը կամ միւսը ժուռ էր չկատարել Շիրին սուլթանի պահանջը՝ իսկոյն ենթարկուում էր կողոպուտի։ Ղուչի հայաբնակ գիւղը թէև տալիս էր որոշած տուրքը, սակայն օր ցերեկով կողոպտուեցաւ խմբից, պատճառ նոյանից մինը իրրև թէ ծածուկ յայտնել է Նախիջևանի գաւառապետին Շիրինի սրտրմանը մասին։ Կողոպտուում են մինչև անգամ գիւղական քահանայի գրեանքը։ Ալքեանդ գիւղի պետական հարկը յիսուն ռուբլի Նախիջևանի գանձարանը տանելու ժամանակ՝ Մամիշ բէգը կողոպտում է։

Այսքան խայտառակութիւնները կատարելուց յետոյ Նախիջևանի գաւառապետը հազիւ ուղարկեց իւր օգնական Դաստպարեանցին, որ գալով Առինջ, ոչ միայն ոչինչ չէ կարողանում անել, այլ և ինքը գերի է բռնուում սուլթանի մօտ, որը խլում է նորա զէնքը, հանդերձը, ձին և իւթեան ստստենում է պահանջում, բայց մի կերպով ազատում է նորան Շիրինի մայրը։

Շիրինի ասպատակութիւնը շարունակուում է մօտ մի ամիս։ Ռուս կազակների մի ամբողջ խումբ գթացուած էր Շիրինին հալածելու և խումբը ցրելու։ Վերջապէս ձերբակալում են շա-

տերին։ Հալածելու ժամանակ Երիւինին փաշայի կողմից նաւբատած կարմիր ջուբբան ահից կոխում են մածնի թուղուղի մէջ կաքաւփետալան գիւղում, ուր ես մի քանի անգամ լսած եմ նորանց ծիծաղելով պատմելու մէջօդին։

Երբին սուլթանը գերդաստանով փախչում է Տաճկաստան։ Նորա եղբայրները թողութիւն խնդրեցին և ստացան։ Շատերը, որ անյայտ էին իշխանութեանը, լուսութեամբ վերադարձան իւրեանց տները։ Իսկ Ջուլեցի Ալիմարգանը, իւր որդի Օրուջը, Հերհերցի Խանայիլը և Այալցի Իսկեանգարը, որոնք շատերին գայթակղեցրել էին խմբին մանակացելու. աքսորուեցան Տամբովի նահանգը, ուր վերջին երկուսը մեռան, իսկ Ալիմարգանը և իւր որդի Օրուջը մի քանի ժամանակից յետոյ թողութիւն առանալով վերադարձան իւրեանց տուն։ Ասյսպէս են պատմում այս անցքը այժմ շատ շատերը։

Այս իրողութիւնը արտայայտում է թուրք տարրի քնաւորութիւնը։ Վերջին Ռուս – Տաճկական պատերազմի ժամանակ ևս լինում էին Դարալագեազի այս և այն գիւղում գաղտնի շարժումներ, բայց կառավարութեան շուտասփոյթ միջոցները խափան զսպում էին անհեռատես մարդ կանոց։

(Շարունակելի) ՔԱՋԲԵՐՈՒՆԻ

ԿՐՕՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ.

Այն օրից, երբ գերմանական մանկավարժութիւնը ազդեցութիւն ունեցաւ հայ մանկավարժական գրականութեան վերայ գերմանական կրթութիւն տուացող հայ երիտասարդների միջնորդութեամբ, մեր գպրոցների դասատուութեան ձևն ևս փոքր առ փոքր փոփոխութեան ենթարկուեցաւ և թողեց հին ուղղութիւնը, նոր առարկաներ և նոր մեթոդներ մուտ գործեցին հայ գպրոցի մէջ, թէև վերանորոգման գործը շարունակուում է, սակայն ոչ մի առարկայ, մեթոդի վերանորոգման հոգից՝ այնչափ յետ չէ մնացել, որչափ կրօնի դասագրքեր շատ են լոյս տեսել, սակայն այդ շատու-

թիւնը դեռ ևս ապացոյց չէ կրօնի գաստատուածքեան մեծագոյն բարեկործութեան։ Վերջին տարիներուս յաճախ գրուեր է այդ բարեկործութեան անհրաժեշտութեան մասին, բայց բարեկործութեան կատարելագոյն դեռ ևս շատ հեռու ենք։ Եւ այս իրողութիւնը ցաւալի և միևնոյն ժամանակ զարմանալի է, երբ իննսուն ենք առնուած կրօնի ուսուցման բարձր նշանակութիւնը հայ մանկանց դաստիարակութեան համար, և այն վնասները, որ յառաջացել և յառաջանում են կրօնի գաստատուածքեան այդ թիւր ուղղութեան շնորհիւ։ Այդ վնասը տարաբախտաբար վերաբերում է ոչ միայն անհատներին, այլ հայ հասարակութեան ամբողջութեանը։

Մեր գպրոցների մէջ կրօնի դաստատուածքեան գլխաւոր նպատակն է՝ որչափ կարելի է շատ բան անգիր անել — իսկ հասկանալը երկրորդական նշանակութիւն ունի, աշակերտները ուսուցչի հարցերին պատասխանում են անգիր արած բառերով, այս ապացոյց է, որ այդ բառերի միտքը մանկանց հոգւոյ մէջ չէ տպաւորուել, վասն զի հակառակ դէպքում այդ բառերի վերարտադրութիւնը մանկական եղանակով պէտք է արտայայտուեր և նոյն իսկ հոգերանական հիմանց վերայ այլ տեսակ ևս չի կարող լինիլ, վասն զի գաղափարները չեն կարող անգիր անելու ժամանակ մանկան հոգւոյ մէջ տեղբռնել, այլ պէտք է նոյն իսկ մանկան կողմից կանոնաւոր վերացուցման եղանակով ձեռք բերուին։ Մեր կրօնուսոյցները տալիս են աշակերտին կրօնական տեղեկութիւններ, առանց կրօնական — բարոյական զգացմունք ներշնչելու նորա մէջ և այդ տեղեկութիւններն ոչինչ ազդեցութիւն չեն ունենում աշակերտի կենաց ընթացքի վերայ, նոքա սովորում են ինչպէս արդէն ասացի. այդ բառերի կուտակումն բերանացի, առանց նորա նշանակութիւնը հասկանալու։ Այդպիսի գիտութիւնը ոչինչ արժէք չի կարող ունենալ, վասն զի բառերն մոռապատկերներին, զգացմանց և գաղափարների արտայայտութիւն են, իսկ ով որ այդ չունի իւր մէջ, նորա համար բառերն ոչինչ բովանդակութիւն չունին, այլ միայն ձայնարկութիւն են։ Բառն իւր մէջ մոռածողութիւնից ոչինչ չէ պարունակում, երբ մենք լսում ենք բառը կամ

հնչիւնը, պէտք է նոյն իսկ ձեր տպագրութիւնը նորա հետ կապակցէնք։

Հայ ուսուցիչը — նոնէ ծրագիրը — աշխատում է՝ որչափ կարելի է շատ նիւթ լցնել մանկիկի գլուխը — տակայն պէտք մնում է դատարկ, դրա վերայ ուշադրութիւն դարձնող չկայ։ Կրօնի ուսուցման մէջ դորձ դրած մեթոդին յարմարուում է գասական մանկավարժ Ծան-Պաւլի հետևեալ խօսքը. «Մարդս պէտք է շատ կրօնական լինի, որ մեր առօրեական կրօնի ուսուցումը չի կարողանում բոլորովին արմատախիլ անել այդ»։ Կրօնի ուսուցումը միւս առարկաների համեմատութեամբ աւելի դըժուար է, որովհետև գործ ունի մանկան հոգւոյ վսեմագոյն մասին, դեռ և այս մեծաւ մասամբ հետևում գտանուող զգացմունքի և մոտպատկերների հետ։ Այս զգացմունքներն և մոտպատկերները կարող են միայն անտիճանաբար յառաջանալ մանկան արտում և այս իմկական, գործող զգացմանից և բովանդակութեամբ հնարաւոր բարոյական մտադրութիւնների յառաջացնելն է կրօնի ուսուցման գլխաւոր խնդիրը։ Մեր հոգևորականութիւնը պէտք է հոգ տանէ կրօնի ուսուցման բարեկարգման մասին և արդէն ժամանակ է, որ տեղի ունենայ այդ բարեկարգութիւն. կրօնի հարցը մեզ համար հայ ազգ-ընկան ապագայ հարց է։ Պէտք է միջոցներ գտնել, որ հետզհետէ զարգացնի անատարբերութիւնը դէպի մեր սուրբ եկեղեցին չընդունձակուի, պէտք է աշխատել կրօնական-բարոյական ուսուցմամբ մեր մանուկ սերնդի սիրտը գաստիարակել, մեր հոգևորականութիւնը չէ աշխատել կրօնի ուսուցման այնպիսի ուղղութիւն տալ, որ համապատասխանի մանկան զգացմունքների զարգացման. ուսուցի թող ուրախութեամբ թոյլ տայ, որ Տանկավարժ-ընկանը օգնէ դորան այդ գործում, քանի որ վերջինս իւր ձգտած նպատակներով ամենայն կերպ աշխատում է մանկիկի մէջ ոչ թէ միայն վառ պահել կրօնական զգացումն, այլ և նպատակում է այդ զգացման կարգացմանն։ Կրօնական և աշխարհային զարգացումը չպէտք է միմեանցից բաժանել, դորա երկուսն էլ ձեռք ձեռքի տուած պէտք է յառաջ ընթանան։ Դպրոցը պէտք է բացատրէ, որ մենք Քրիստոնեայ և Հայաստանեայց եկեղեցւոյ անպատք ենք և կարդ

[illegible]

Ամենահաստատուն համոզումն, որ բարձր է ամեն գիտութիւնից, կարելի է գտնել բարոյականութեան մէջ, որն իսկապէս որոշում է մարդուս իսկական արժէքը և բնաւորութիւնը։ Չէ՞ որ ճշմարիտ զարգացման էական սկզբունքը նորա բարոյական նպատակն է։ Դաստիարակութեան նպատակն է աշակերտից մի քաղաքական մարդ պատրաստել, այսինքն նորան մօտեցնել անձնուրաքութեան իդէալին։ սակայն բարոյականութիւնն ինքն ընդ ինքեան ընդունում է մի[illegible]ական և կրօնական հեղապարան, ուստի և դաստիարակութեան նպատակն պէտք է լինի ոչ միայն բարոյական այլ և կրօնական-քաղաքական բնաւորութեան զարգացնել մանկան մէջ։

Բարոյականութիւնը մարդկային արժանաւորութեան առաջին պայմանն է և ի՞նչ են բարոյականութիւն չունեցող մարդիկ՝ եթէ ոչ մարդկութեան նախատինք բերող արարածներ...։ Դպրոցը չի կարող կոպտել բնաւորութիւն վարգայնել, այլ նա կարող է միայն մի բարոյա-կրօնական բնաւորութեան զարգացումն պատրաստել, վասն զի նա սանիկների մտածմունքն և կամքն ուղղում է դէպի այդ իդէալը։

Բնաւորութիւնը կազմակերպվում է բոլորովին աստիճանաբար և հաստատուն կամքը կազմվում է առանձին մտապատկերների շղթաների մէջ։ Բնաւորութիւնը այն է, ինչ որ մարդ կամենում է, իսկ կամքը կազմվում է ցանկութիւններից. ուրեմն եթէ դաստիարակութեան նպատակը բնաւորութեան զարգացնելն է, նա պէտք է ամենից առաջ այնպիսի ցանկութիւններ յառաջ բերէ մանկան մէջ, որոնք յենվում են բարոյականութեան վերայ։ Սակայն որովհետև նոյն իսկ ցանկութիւնները մտապատկերների յարաբերութիւններից են յառաջանում, ուստի և դաստիարակութիւնը պէտք է մանկան մտապատկերներն այնպիսի յարաբերութեան մէջ դնէ, որ դրանք բարոյական ցանկութիւններ յառաջացնեն։ Միայն ցանկութիւնները բաւական չեն, որոնք պէտք է կամքի աստիճանին բարձրանան. դորա համար [illegible]

ընդհանրապես և կատարեալ ճանաչողութիւն ցանկացածին հասանելիութեան պատճառաբանութեանց։ Այս կարելի է երկու կերպ ձեռք բերել կամ փոյթով և դրա վերայ հիմնուած տեսական հայեացքով, կամ թէ կենցաղական հաւապով։

Ուրեմն բարոյական կամքը ունենալու ժամանակ անհրաժեշտ է ցանկացածին հասանելիութեան համոզումն ունենալ, իսկ այդ համոզումն ունենալու ժամանակ հարկաւոր է փորձ կամ հաւատ։ Որովհետև փորձով այդ համոզմունքը ձեռք բերելու համար մարդ պէտք է գործէ. ուստի և դաստիարակիչ ուսումնարանը պէտք է ուղիղ տայ իւր սանիկներին բարոյական գործողութիւններ կատարելու, որպէս զի նրանք անձամբ այդ փորձերն յաջողեցնեն։ Սակայն աշակերտները բարոյական գործողութեանց փորձեր անելով կտեսնեն, որ իրենց բարոյական ձգտումները մի տեղ յաջողւում են, միւս տեղ սչինչ հետեւանք չեն ունենում. նրանք շուտով կտեսնեն, որ այլ զօրեղ ոյժեր իրենց կամքը հակառակ բարոյականին են յառաջ մղում, կտեսնեն նոյնպէս, որ արտաքին կեանքի հանգամանքները միշտ չեն թոյլ տալիս բարոյական իդէալների իրականացումն։ Շուտով մարդ հանդիպում է այնպիսի հանգամանքների, ուր նա պէտք է կամ հետևի բարոյականութեան՝ կապակցուած արտաքին թշուառութեան հետ, կամ անբարոյականութեան՝ կապակցուած արտաքին բաղդաւորութեան հետ։ Այս փորձերի ճնշման ներքոյ մարդուս կամքը տատանւում է բարոյականութեան և աշխարհահայեցողութեան մէջ և յաճախ երկրորդն յաղթող է հանդիսանում. մարդ բաւականանում է հասանելիներով և մի կողմը թողնում ըստ երևոյթին անհասանելին։ Սակայն բարոյագիտութեան պահանջը կախում չունի հասանելիութեան կարելիութիւնից, նա իւր պահանջը յառաջադրում է իբր անպայման հասանելիութեան արժանաւորթիւն ունեցող։ Նա պահանջում է ոչ թէ միայն այս կամ այն բարոյական մտքի տեսակին, այլ ամբողջ կամքի հպատակումն փորձնական հիմնագաղափարներին։ Մի այսպիսի կատարեալ հպատակութիւն, — ի բաց առեալ կրօնական մտապատկերներն — չի կարող լինել. ոչ մէկը մեզանից չէ կարող այդ իրա-

գործաւած տեսնել, սակայն այդ մեր ձգտման նպատակը պէտք է լինի։ Ա յստեղից պարզ կարելի է եզրակացնել, որ բարոյական իդէալին հասանելիութեան համազումն ոչ թէ փորձի և իմացութեան գործ է, այլ հաւատի։ Ա յս հաւատն է՝ կրօնական հաւատ վասն զի նա մի փորձից չյառաջացած, սակայն երեւոյթից աշխարհի վերայ տիրող զօրութիւն է։

Պարզ է, որ բարոյական իդէալները չեն կարող տեղի ունենալ առանց կրօնական հաւատի։ Առանց կրօնի չկայ բարոյականութիւն, հետևապէս անկրօն ուսումնարանը՝ չկարողանալով դաստիարակութեան նպատակին=բարոյական մարդ զարգացնել—իրագործել, չի կարող դաստիարակիչ լինել։ Կրկնում ենք դարձեալ, որ մեր դպրոցներում գործողները սխալվում են կրօնի ուսուցմանը չնչին նշանակութիւն տալով։

«Դատարկ խօսքեր են, երբ ասում են՝ թէ կարելի է առանց կրօնական մնեմոնների դաստիարակել մի ժողովուրդ կամ մի անհատ»։ ասում է յայտնի Հոգեբան-փիլիսոփայ և Լայպցիգի համալսարանի հանգուցեալ նշանաւոր ուսուցչապետ Ֆեխնէր։

«Նա, ով որ արտաքսում է դպրոցից կրօնի ուսուցումը, կամ թէ երկրորդական նշանակութիւն է տալիս դրան՝ գըլխում է արևը երկնքից կամ թէ խլում է տարուայ գարունը, ասում է դասական մանկավարժ Տըօպչնըօցկի։ Իսկ ներկայիս գերմանական ամենայայտնի մանկավարժներից մէկը՝ Դեօրպֆելդ—ձօնըքօն—ասում է. «Ով որ կամենում է դպրոցից դուրս ձգել կրօնի ուսուցումը, նրան կարելի է ուղղակի իրաւամբ ասել, որ նա խլում է դպրոցական կեանքի գարունը. սակայն մի՛թէ դարունցից լաւ են նոքա, որոնք թէև կրօնի ուսուցումը թողնում են դպրոցում միայն անունով, սակայն ընդհանուր դպրոցից ամայի և ցուրտ չեն նոքա, որտեղ ոչ մի աղբիւր չի կարող բխել»։

Կրօնի դաստիարակութեան խնդիրը ամենից աւելի ուշադրութեան առարկայ պէտք է դառնայ հայ մանկավարժների համար. որովհետև այս եղանակը և ձևը, որ ցայժմ գործ է դրուել կրօնի ուսուցման ժամանակ, չի կարող և չպէտք է շարունակուի, եթէ հայ դպրոցը կամենում է ազդեցութիւն

ունենալ սանիկների և իզձի զարգացման կազմակերպութեան վերայ։ Կրօնի դաստիարակութեան այդ մեթոդը, ինչպէս որ երկարժամանակեայ փորձը ցոյց տուեց, ճիշդ չէ, ոչինչ ազդեցութիւն չէ թողնում սանիկի սրտի և իզձի վերայ և մինչև անգամ վնասակար հետևանքներ է ունենում։

Մի միայն գլխաւորը ամենայայտնի դիպուածում անգամ ցոյց է տալիս սանիկին մի իդէալ, սակայն այդ իդէալը սանիկը չէ իրագործում, իւր իդէալը չէ շինում՝ միայն գիտենալը կարելի է նմանեցնել ընծայուած ոսկի դրամներին, սանիկը զուարճանում է դոցա փայլով, հնչիւնով, դոցա շատութեամբ՝ առանց ճանաչելու դոցա իսկական արժէքը։ Նոյնն է սանիկի համար և կրօնական ուսումն առանց իրական փորձի։ ամենայն ինչ անգիր անելը սատկի է դարձնում սանիկի աչքում նոյն իսկ կրօնը։ Պատմել և յետ պատմելը ոչինչ ազդեցութիւն չէ թողնում սանիկի ներքին աշխարհի վերայ։ պէտք է սկզբի խորը թափանցել նիւթի մէջ և այնտեղ գտնուած մարգարիտները հանել սանիկի օժանդակութեամբ և աշխատակցութեամբ։

Անհրաժեշտ է կրօնի ուսուցման ցայժմ տիրած ուղղութիւնը խորտակել և դորա տեղը դնել մի այնպիսի մեթոդ, որ համապատասխանէ հանգամանաբանական—հոգեբանական պահանջներին և նպատակ ազակերպանէրի մէջ կրօնական և բարոյական զգացմանց յառաջանալու և զարգանալու։

Նորերումս Արժանապատիւ Սահակ Տահանայ Սահակեանցի աշխատասիրութեամբ լոյս տեսած «Կրօնի դասագիրքը» և «Սրբազան պատմութիւնը» ի հիմնապէս փոխյ է այդ ուղղութեամբ։

«Իմ ցանկութիւնն է, ասում է Արժ. Հայրը իւր յառաջաբանի մէջ, որ կրօնուսոյցը իւր սանների մէջ կրօնական հետաքրքրութիւն զարթեցնէ, այսինքն նիւթն այնպէս ուսանող, որ սանները հետաքրքրուին, որ սրտացածը հետաքրքրէ սուսցողներին, որ շարժէ, դրդէ դէպի գործունէութիւն, դէպի յառաջադիմութիւն, որ նրանց մէջ մի ներքին զօրութիւն ծնէ, որ այդ զօրութիւնը՝ հետաքրքրութիւնը սիրել նրանց անվերջ կերպով կատարելագործելու իրանց սրտացածը և շահելու քանքարը—ահա ուսուցման բոլոր գագաթները։

Մեր նպատակն այն չպիտի լինի, որ մեր աշակերտը այսքան բան գիտենայ, այլ այն՝ որ գիտեցածը մեռեալ դրամագլուխ չըմնայ նորա մէջ։ Մենք աշակերտներին պէտք է այն դէնքը տանք, որ մի օր, դպրոցի նստարանը թողնելուց յետոյ, զգուշանօք չնայեն այն առարկաների վերայ, որոնցով երկար տարիներ զբաղուել են, որ դպրոց աւարտելը բանտիկ դուրս գալ չհամարեն, որ նրանք վկայականն ստանալուց յետոյ գրքերն և տետրները փոշու կերակուր չդարձնեն, այլ իւրեանց ստացած հիմն ընդունելով՝ կեանքի մէջ շարունակեն կատարելագործել և հարստացնել իւրեանց դրամագլուխը։ Բայց ե՞րբ կանեն նրանք այդ բանը։ — Սրբ մենք կտանք իրանց այն կարողութիւնը, որ կոչվում է հետաքրքրութիւն . . . . Ինչ պիտի անէ կրօնաւորը որպէս զի իւր աշակերտների մէջ այդ զօրութիւնը ներշնչել կարողանայ։ Ահա հէնց այդ նպատակի համար կազմած է ռուսի աշխատութեան երկրորդ մասը՝ ուսուցչի բաժինը, նիւթի մշակութիւնը . . . . Մենք տալիս ենք ինչը միայն՝ հում նիւթը, ինչո՞ւ չպիտի մուտանալ, չէ որ մենք սրտի վերայ ենք ուզում աղդել և ոչ այս կամ այն անձի պատմութիւնը միայն ուսուցանել։ Նիւթը մեր ձեռքին դիջոց է մեր ցանկացած նպատակին ձգտելու և հէնց դորա համար էլ ընտրուած են սակաւաթիւ և այնպիսի նիւթեր, որոնք աւելի ընդունակ են այս կամ այն կրօնական, բարոյական իմաստը տալու ասնին։ Մենք չենք էլ կամենում և ոչ կարող ենք մեր դպրոցական ուղղ տարիներով և սակաւաթիւ ժամերով սահմանել ամբողջ սուրբ գիրքն անցնել ծայրէ ի ծայր։ Այլ նախընտրած ենք փոքրով բաւականանալ և նորանով զարթեցնել մեր ունկնդիրների մէջ այն հետաքրքրութիւնը դէպի սուրբ գիրքը՝ դէպի կրօնի աղբիւրը, որ սանը մի օր ուսումնարանի սեամը թողնելուց յետոյ, մեր նորան տուած հետաքրքրութիւնը շարժէ պահպանել լրացնելու, որ մեր սանը ընտանեկան յարկի տակ որպէս հայր, որպէս ընտանիքի ազատ անդամ ստացած քանքարները հոգի մէջ չթաքցնէ։ Այսպէս ուրեմն չպիտի միայն ինչը ուսուցանել, այլ և ինչո՞ւ. սովորարար շատ ենք տալիս, էնչ էլ բաւական է. ջոկն ենք աշխատում հարստացնել, որի վերայ պիտի աղդել. քանակն անկարևի է,

ընթերցիչն պիտի անել» *)։

Կրօնի ուսուցման նպատակն է սուրբ գրքի և մեր սուրբ հայրապետաց գլուխածների հիմանց վերայ քրիստոնէական հաւատս և կեանք զարթեցնել ու զարգացնել սանիկների մէջ։ Մանկավարժական տեսակէտից՝ կրօնի ուսուցումն ևս ընթերցիչ-նէն պէտք է սկսէ, ուստի և կրօնի սկզբնական ուսուցման համար համարեա ամենայն տեղ գործ է դրվում Սրբազան պատմութեան առաջին և երկրորդ մասերը, որովհետև այդտեղ պատմութեան ասանդման ձևը նկատողական, պարզ, դիւրըմբռնելի և բնական է։ Եւ բացի դորանից այդ պատմութեան գրքերի պարունակում են իւրեանց մէջ հարուստ կրօնական և բարոյական մտքեր։ Դոցա մէջ գտանվում են շատ գեղեցիկ սկզբունքներ պատանեկական սրտի կանոնաւոր զարգացման համար և ահա այդ սկզբունքները պէտք է գործ դնել սանիկի կրօնա-բարոյական զարգացման համար։

Այս տեսակէտից առաջնորդուելով Արժ. Սահակ քահանան սում է իւր յառաջաբանի վերջը. «Հէնց դարս համար էլ մենք կրօնի ուսուցման սկզբնական նիւթը այդ անհուն, այդ հարուստ աղբիւրն (սուրբ գիրքը) ենք ընտրում՝ յարմարեցնելով մանկավարժական պահանջներին, և նկատի առնելով տանների հատակը և զարգացման աստիճանը» **)։

Դիտնական մանկավարժութեան պահանջներից մէկն՝ փուլ-փակչական-պարտական աստիճանների հետևումն ուսուցման ընթացքում՝ առաջնորդուելով Գեօրկէ հետևեալ գեղեցիկ խօսքերից. «Պատանեկութիւնը միշտ պէտք է կրկին սկզբից սկսէ

(*) Տես Դասագիրք կրօնի ուղեցոյց հայ կրօնուսոյցների համար, հին—ւելիաի նիւթի մշակութիւնը։ Հատ. Ա. դասախօսեց Ներսիսեան դպրոցի ստորին դաս. աշակ. Սահակ քահ. Սահակեանց. Տփխիս. Հրատարակութիւն «Թիֆլիսի Ընկ. Հայերէն գրքերի հրատարակ. 8˚484 էջ, գինն է 75 կ. Տպարան Ռօտինեանի, 1888 թ. Ճառաջաբան էջ 1—3։

(**) Տես, Մի քանի խօսք հայ կրօնուսոյցներին, Սահակ քահ. Սահակեանց. Տփխիս. Տպարան Ռօտինեանի 1888 թ. 23 էջ, գինն է 10 կ.

և իբր անհատ աշխարհի քաղաքակրթութեան շրջաններով նորից անցնէ»։

Ուսուցման նիւթի լուսաւորութիւնը կամ յայտնութիւնը պէտք է ընտրել հետևելով ընդհանուր մարդկութեան քաղաքակրթական — պատմական զարգացման ընթացքին, որովհետև մանկան հոգեկան զարգացումն ևս նոյն շրջաններով պէտք է անցնի ինչ շրջաններով որ անցել է մարդկութիւնը իբր մանկական հասակում։ Սուրբ գրքի առաջին մասն, հին կտակարանը կազմում է ընդհանուր մարդկութեան զարգացման պատմական նախաստիճանը, այսինքն դարձ քաղաքակրթական — պատմական զարգացման սկիզբը։

Արժ. Սահակ քահանան հետևելով գիտնական մանկավարժութեան այս պահանջին՝ իբր աշխատասիրած Սբ. Պատմ. Գրոց մասնիչներ բաժանել է հետևեալ չորս դասընթացքներ։

Ա. Նախապատմական դար (պէտք է լինի դարաշրջան)

Բ. Նահապետների դար (դարաշրջան)

Գ. Դատաւորների դար (դարաշրջան)

Դ. Թագաւորների դար (դարաշրջան)

Սակայն ափսոս, որ Արժ. Հայրը մնացել է այս բաժանման սկզբունքը կամ պատճառները իբր գրքի ընթերցողներին բացատրել. այս պակասը լրացնենք համառօտ կերպիւ։

Առաւօտուց գալափարը մի այնպիսի լուսատու ճառագայթ է, որ շատ շուտով պէտք է ներս թափանցէ մանկան մէջ, իսկ այդ գաղափարը ոչ մի դէպքում մանուկը այնպէս շուտ չէ կարող ըմբռնել քան երբ Առաւօտուն ներկայացնենք իբր ստեղծող երկնի և երկրի։ Արդէն երեք — չորս տարեկան մանուկները հարցնում են «ո՞վ է լուսինը շինել» և այլն. այսինքն այնպիսի հարցեր, որոնք ցոյց են տալիս, որ մանուկը արդէն կարողացել է ըմբռնել, որ այդ տպաւորած չի կարող լինել. մանուկը տեսնում է, որ իւր ճանաչած ամենազօրեղ մարդն անգամ — իւր հայրը — չի կարող մինչև երկինք հասնել. ուրեմն այն պատասխանը, որ Առաքեալն է ստեղծել լուսինը, նոյնպէս և արևը. երկինքը, աստղերը և ամբողջ երկիրը — կարող է մանկան մէջ ստեղծել մի հզօր և ամենակարող էակի գաղափարը։ Այս գաղափարը անհիմնելը

ստանում են արդէն իւրեանց ընտանեաց եւ իւրեանց հետ գործոց բերում։ Ահաւասիկ մենք այդչափը բաւական ենք համարում։ Մանուկը ընտանիքից գործոց գալով չպէտք է անջատուի ընտանեական կեանքից. ընդհակառակը գործոցը պէտք է նորան մի աւելի մեծ ընտանիքի, ընկերութեան մէջ մտցնէ. այսեղ մանուկը պէտք է ճանաչէ մի հեղինակութիւն, որին հպատակէ իւր մանկական հաւատարմութեամբ, ինչպէս որ իւր ընտանիքում եւս հպատակում է ծնողների հեղինակութեան։ Ի՞նչ ուսուցման նիւթ առաւել նպատակաւոր կլինի այս բանի համար քան նահապետական դպրոցը. նահապետական պետութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի աւելի մեծ եւ ընդարձակ ընտանիք։ Այդ մեծ ընտանիքի անդամները հպատակում են իւրեանց գլխաւորին, ինչպէս մանուկները իւրեանց ծնողաց։ Սանիկներին ծանօթացնելով նահապետների պատմութեան հետ, մեր նպատակն է, որ նա հնազանդուի մի ընկերական հեղինակութեան։ Այս նպատակին չէ ծառայում «նախապատմական դպրոցը» — որ է 1. աշխարհի արարչագործութիւնը եւ մարգուս սահմագործութիւնը. 2. դրախտ. 3. պատուիրազանցութիւն. 4. Կայէն եւ Աբէլ 5. Ջրհեղեղ. 6. Բաբելոնի աշտարակաշինութիւնը։ — Այս դարաշրջանի այդ վեց գլուխները իւրեանց խորին փիլիսոփայական հիմունքներով շատ պիտանարար են կրօնի ուսուցման «նպատակադրութեան» համար. թէև կարելի է հարկէ այդ նիւթն եւս մշակել, ինչպէս արել է Արժ. Սահակ քահանան, սակայն այնու ամենայնիւ մեր ցանկացած պարզութեամբ չի ըմբռնուի եւ սպասելի վհատ ղգայմունքներ չի յառաջացնի սանիկների մէջ։ Աւելի լաւ է այս նիւթը վերապահել մի ուրիշ ժամանակի համար, երբ սանիկներն աւելի մեծ պաշար կունենան իւրեանց կրօնական զգայմունքները իւրացնելու։ Արժ. Սահակ քահանայի Սրբազան պատմութեան գործածողներին մենք առաջարկում ենք՝ ժամանակապրպես թողնել նախապատմական դարաշրջանը՝ եւ ուղղակի սկսել «նահապետական դարաշրջան»ից, առաջնորդուելով այն սկզբունքից, որ սանիկներին պէտք է միայն այնպիսի նիւթ տալ, որ դէպք կարողանան մարսել, համեմատ իւրեանց ունեցած պարզ եւ հոգեբանական գա-

զափարների *)։

Սրբազան պատմութեան «Նահապետները» ամենից մեծ է մանկական տեսակէտին և դիւրըմբռնելի նորա համար. այստեղ պարզ և որոշ կերպիւ յերևան է գալիս Աստուծոյ գործարքը՝ իբր Հայր մարդկութեան, ինչպէս որ օրի. համար Աբրահամը կառավարում է իւր մեծ ընտանիքը, այնպէս և Աստուած կառավարում է ամբողջ մարդկութիւնը կազմող ընտանիքը — աշխարհը։ Կրօնական զգացմունքը զարգանում է այստեղ Աստուծոյ և մարդկանց մէջ տեղի ունեցած մտերիմ յարաբերութիւնից և այդ պատմութեանց մէջ այն յաճախ կրկնուող իրողութիւնից, որ մարդս կախում ունի իւրեանից բարձր եղող մի էակից, Աստուածուց։

Կրօնական զգացմունքից յետոյ մեծ նշանակութիւն ունի դաստիարակութեան համար տանիկի դէպ ամեն ծագումնային ուղեցոյց դաստակցութեան և ուրախակցութեան զգացման զարգացումը, մարդկային զգացման և ձգտման բնական և էական հիմունքների, ընկերական յարակցութեանց ամենահատարակ սկզբունքները մենք գտնում ենք նահապետների պատմութեանց մէջ։ Եթէ հնութեանց յիշատակարանների միջից հանենք այդ պատմութիւնները, այն ժամանակ մենք շատ քիչ բան կգիտենայինք մարդկային ցեղի, առաջին, բնական և ընտանեկան կեանքի մասին։ Այդ պատմութիւնները ներկայացնում են մեզ մարդկային ցեղի սկզբնական զարգացման պատմութիւնը. հարկար կեանք, խաղաղ և միացած ուժով գործող բնաւորութիւն՝ այս է նահապետների ժամանակի նկարագրութիւնը։ Դոցա

(*) Այդ առաջարկութեան (նախապատմական դարաշրջանի դասաւորութիւնն ապագային թողնելը) գործադրվեցաւ մի քանի տեղ գերմանիայում, բայց վերջը թէ եկեղեցականութեան բողոքի և թէ սուրբ գրոց հետևողականութիւն պահպանելու առթիւ, բարձի թողի եղաւ. նա մանաւանդ որ արդէն կարևոր գաղափարն Աստուծոյ ամենակարողութեան և իմաստութեան մասին աշակերտն իւր ընտանիքից հետը բերում է դպրոց, ուսոի և առանձին դժուարութեան չպիտի հանդիպեցնէ այդ դարաշրջանի դասընթացը թէ աշակերտին և թէ ուսուցչին. մանաւանդ եթէ վերջինը փոքր ի շատե տէր է իւր գիտութեան։

կանքի ձգտումներն էին՝ հայրական, ամուսնական և մանկական սէր, Աստուծոյ երկիւղ, տնային կամ ընտանեկան երջանկութեան քաղցր և երկար կեանքի վայելումն։ Եւ այժմեան քաղաքակրթութեան համար ի՞նչ աւելի յարմար սկզբնակէտեր կարելի էր ունենալ. տնային կարգապահութիւն, կրօն, սեռհականութեան աներեսպարզ գաղափար՝ ոտքա էին կազմում այն կաթն, որով կերակրվում էր մարդկային ցեղի մանկութիւնը և զարգանում։

Պատրիարքների-մարդկութեան այդ մանկական հասակի ժամանակ հեղինակութիւնը մեծ դեր էր կատարում և նոյնը պէտք է լինի անհատական մարդու մանկական հասակում. մանկան քնքոյշ բնաւորութիւնը, որ դիւրահաւատ և ազդեցութեան ընդունակ, հետևող, ամեն բան զարմանքով ըմբռնող է՝ պարունակում է իւր մէջ հաւատ, յոյս և սէր, որ կազմում են բոլոր գիտութեանց, ձգտումների և երջանկութեան սերմերը. այսպէս էր նաև մարդկութիւնն իւր մանկական հասակում։ Նահապետական դարաշրջանը նկարագրում է՝ մարդ, այր, կին, հայր, մայր, որդի, ժառանգ, Աստուծոյ պաշտօնեայ — քահանայ — կառավարիչ ու ընտանիքի մեծ. և այս գաղափարների վրայ է հիմնվում ապագայ հազարաւոր տարիների ամբողջ քաղաքակրթութիւնը։ «Նահապետական վրանը չափազանց կճա՛ նանաչ ծպտչա-ընեան առէ՛ պարը», ասում է շնորհալի կերպիւ Հէրբէրէ փիլիսոփան։ Արդեօք մենք չպէ՞տք է մեր սանիկներին նոյն կաթով կերակրենք, ինչ կաթով որ կերակրուել է մարդկութիւնը իւր քնքոյշ մանկական հասակում և մի՞թէ մեր սանիկները սիրով չեն իւրացնի մարդկութեան մանկութիւնը և մեծ հարցասիրութեան ինդրէս — ունենալ այդ կեանքի նկարագրութեան համար։

Այդ պատմութիւններն արթնացնում են սանիկի մէջ նաև այլ հարցասիրութիւններ, ինչպէս օրի. համար էմպիրիքական հարցասիրութիւն, դրա այնպէս են նկարագրում մարդկանդ սրախոհութիւնն ու տխրութիւնը, որ սանիկը համակրում է դոցա. դոցա մէջ մարդիկ յերևան են գալիս իբրեանց գործունէութեան մէջ, մարդ ոց բաղդը Աստուծոյ ձեռքին է։ Այդ

պատմութիւններն առաջնորդում են սանիկին դէպի կրօնական հնազանդութիւն։

Նահապետական դարաշրջանին հետևում են «դատաւորների»ի և «թագաւորների»ի դարաշրջանները. առաջինի նշանաւոր հերոսն հանդիսանում է Մովսէս։ Այս շրջաններում Իսրայէլացիք արդէն մի ազգ են կազմում և այդ նոր կազմուած ազգութիւնը գիտակցաբար հպատակում է մի աւելի գերագոյն հնինակութեան, որ կարգադրում է բոլոր միմեանցից տարբեր ազատ ձգտումները միաւորել և հաւատարակշռութիւնը տպահովել. տրքանները հանդիսանում են իբր Աստուծոյ կամքը կատարողներ։ Պարտաւորների դէպքերում իսկապէս շատ հիմք չէ տալիս դատախարակչական նպատակի համար, որովհետև այստեղ ապստամբութիւնը (Աստուծոյ դէմ), նեղութիւնը, դարձը, հանգստութիւնը և կրկին ապստամբութիւնը, նեղութիւնը, դարձը և հանգստութիւնը յաջորդում են միմեանց և կրկնվում. այս մի բարոյական և կրօնական անկման դարաշրջան է Իսրայէլացոց համար։ Միութեան զգացումը խանգարվում է մանաւանդ ձգտումներով. ճշմարիտ աստուածպաշտութեան պահպանում է կաստաշատութիւնը, ժողովրդի բարոյական կեանքը փոխվում է կաստաշատական անդամազատ վայելչութեանց. մի խօսքով Իսրայէլացոց կրօնա-բարոյական կեանքը երբէք այնչափ չէր վտանգել, որչափ այդ դարաշրջանում։ Այս պատճառաւ և բոլորովին արդարացի ենք գտնում, որ Արժ. Սահակ քահանան, այդ դարաշրջանում՝ բացի Մովսէսի պատմութիւնից դնդն վերջ գլուխ է տեղաւորել իւր Սրբազան պատմութեան մէջ։

Ինչպէս արդէն ասացինք՝ դատախարակութեան նպատակն է սանիկին մի բարոյական մարդ պատրաստել, այսինքն նորան մոտեցնել աննահատոյթեան նպատակին։ Արդ մանկան այդ իդէալին մօտեցնելու համար բաւական չէ նրա առաջը դնել այդ վերացական գաղափարը, այլ հարկաւոր է մի մարմնացած օրինակելի անձնաւորութիւն, մի, նոյն իսկ իդէալական անձնաւորութիւն, որ իւր մէջ մեռցրած լինի մարդկային բոլոր արժանաւորութիւնները ու առաքինութիւնները. մանուկն իւրաքան-

չիւր քայլափոխում· այդ օրինակելի պատկերը պէտք է այլ ու այլ ուշեցնայ և միշտ ձգտել նրան մօտենալու։ Եւ ոմ այլ օր կարող է քրիստոնեայ այդպէսի համար այդ իդէալական անձնաւորութիւնը ներկայացնել, եթէ ոչ նոյն իսկ հիմնադիրն քրիստոնէական բարոյականութեան — Յիսուս=Քրիստոս։ Եւ Սրբազան պատմութեան երկրորդ և գլխաւոր մասն է Յիսուս=Քրիստոսի կեանքը, որ մենք պէտք է ուսուցանենք մեր տանիկներին իբր ամենագործնական, ամենազգու, դաստիարակութեան նպատակին ամենատանելիական և ամենազօրեղ կերպիւ նպատակ ունենք։ Սրբազան պատմութեան առաջին մասը պէտք է միայն իբր նախապատրաստիչ մի ոյժ ճառայէ քրիստոնէութեան համար։ Նա պէտք է տանիկների իւրացուցման կարողութիւնն լաւ կարելոյն նախապատրաստէ քրիստոնէական գաղափարների ըմբռնման համար։ Երբ այդ նախապատրաստութիւնը վերջացաւ, այն ժամանակ միայն սկսւում է դաստիարակիչ գլխաւոր գործը, այսինքն տանիկը պատրաստւում է ըմբռնելու այն ամենամնաքաւ և սուրբ կեանքը։ որ վարեց երկրիս վրայ ամեն ուսուցման իդէալը ներկայացնող անձը=Յիսուս—Քրիստոս։

Քիսուս—Քրիստոսի կեանքը կամ թէ նորա մէջ մարմնացած աշխուժ հոգեբուղխութիւնը և բարոյականութիւնը ներկայացնում է մեզ համար նաև իբր ընդհանուր քաղաքակրթութեան ամենագործնական սահման, որին կարող է համապատասխանել և անհատի զարգացման սահման, որ կլինի նոյնպէս այդ անհատական զարգացման ամենագործնական սահմանը։ Հետևեալ սահմանները ներկայացնում են այդ գաղափարների տարածումն աշխարհիս ամենայն կողմերը։ Ա յտելով մեր տանիկներն ուսանելով Յիսուս Քրիստոսի կեանքը, ստիպ են դնում քաղաքակրթութեան ամենագործնական սահմանի վրայ, որի վրայ և պէտք է մնան նոքա իւրեանց ամբողջ կեանքի ընթացքում։—այս է էլեոպոնէական պատպէքալիէ դէղոյի պահանջը և նպատակը։

Արդեօք լի՞նչ չափ պէտք է տանիք տանիկին այս պարունակութեամբ հարուստ և ճոխ նիւթը։ Արդեօք նորա ձեռքը տանիք

գլխաւոր բնագիրը կամ նորա հետ ի միասին կարդանք նոյնը՝ թէ տանք աշխարհաբառ թարգմանութիւնը։ Երեսաբար բնագիրը չի կարելի տալ աշակերտի ձեռքը. որովհետև սրբազան պատմութիւն սովորող աշակերտը դեռ եւս լեզուի կողմից այդչափ պատրաստութիւն չունի և լաւ չի կարող ըմբռնել, մնում է ուրեմն աղխագիաւոր թարգմանութիւնը։ Այժմ կրկին հարց է՝ թէ պէտք է քաոաոյն հետևողութեամբ թարգմանել, թէ քաղցրութիւն ապաւ և յարմարեցրած մանկանց մտաւոր պաշարին.—մենք երկուսն էլ չափազանցութիւն ենք համարում։ Բաղցրութիւն քաոաոյն թարգմանութիւնը նպատակայարմար չենք համարում, որովհետև բնագրի մէջ յաճախ պատահում են այնպիսի տեղեր և բառեր, որ հասկանալի չեն կարող լինել տանիկների համար։ իսկ քաղցրութիւն ապաւ ձևակերպութեամբ այս նիւթին հեքաթի նմանութիւն տալն, ինչպէս արել են շատերն՝ նոյնպէս անյարմար և անպատշաճ է։ Ընդհանրապէս պէտք է պահպանել բնագրի բնաւորութիւնը, որ վեհ է և որոշ վրայ ազդող, սակայն լեզուի փոփոխութիւններ պէտք է մտցնել, տանիկներին մատչելի լինելու համար։ Իսկապէս այս փոփոխութիւնները շատ չեն լինի, որովհետև սուրբ գրքի լեզուն ընդհանրապէս պարզ և գեղեցիկ է։—Արժ. Սահակ քահանան իւր Սրբազան պատմութեան մէջ այս միջին ճանապարհն է ընտրել. «. . . . Որ թարգմանութեան գլխին բառացի կերպով ծագկաքաղ է արած սուրբ գրքից. . . .»*), թէև ի հարկէ տեղ-տեղ պատահում են մանկանց դժուար հասկանալի դարձուածներ կամ բառեր **)։

(*) Տես դասագիրք կրօնի. յառաջաբան էջ 4։

(**) Օրի. համար 1. «դու երկրիս վերայ երերալ և տատանեալ կհամարիս», Օրին. պատ. էջ 8)։ 2. «Ան ժամանակ Աստուած պատրաստից մի մեծ լուսաւոր՝ ցերեկը, և մի փոքր լուսաւոր՝ գիշերը կառավարելու համար. (նոյն, էջ 2)։ 3. «Դորանից յետոյ տեսաւ եօթն ուրիշ ազազուն խոշակահար հասկեր էլ դուրս եկան» (նոյն էջ 50)։ 4. «Պալատում իւրաքանչիւր օր գործ էր անվում 90 քառ ալիւր»)նոյն, էջ (53) և այլն։

Սովորական դասատուութեան մեթոդով նոր նիւթի մշակումը վերջանա՞մ է, երբ աշակերտը կարողանում է դասը «յիսո պատմել»։ այս մեթոդի սխալ լինելն լսո ինքեան պարզ է. ընդհակառակը հէնց այդտեղից է սկսվում դեռ նոր նիւթի մշակումն. ապա պէտք է խորասուզուել պատմած նիւթի մէջ. այս պէտք է տեղի ունենայ երեք տեսակէտից. 1. կրօնական—բարոյական, 2. տղա-տակերական—պատմական և 3. աշխարհագրական տեսակէտից։

Նիւթի մշակումն դժուարանում է առանձնապէս քաղաքակրթական—պատմական տեսակէտից, որովհետև այս տեսակէտը չպէտք է գերազանցէ կրօնական—բարոյական տեսակէտին, այլ օժանդակէ սորան։ Պատմուած հատուածի մէջ գըտնուած այն տեղեկութիւնները, որոնք վերաբերում են ժողովրդի քաղաքակրթութեան պատմութեանը՝ պէտք է ի մի տեղ ժողովել և ապա ուսուցիչը այս հատուածից մի ամբողջութիւն պէտք է կազմէ և կենդանի կերպով նկարագրէ սանիկներին՝ պատկերների ու նկարների օգնութեամբ։

Ինչպէս քաղաքակրթութեան պատմութեան վերաբերեալ, նոյնպէս և աշխարհագրական վերաբերեալ նիւթը պէտք է ժողովուի, աշխարհագրական քարտէզը պէտք է հեռուհեռ կապ՞ի՝ նայելով իւրաքանչիւր հատուածի մէջ պարունակուած աշխարհագրական նիւթին. այս քարտէզը կօժանդակէ աշխարհագրական գաղափարների պարզութեան և հասկանալիութեան։

Իւրաքանչիւր հատուած պէտք է սանիկի կրօնա-բարոյական պարգացման համար նոր նիւթ տայ և ձեռք բերած գանձի վրայ մի բան աւելացնէ. Առհասարակ ընդունուած է, որ պատմական հատուածի մէջ պարունակուած կրօնական և բարոյական հիմնագաղափարները անմիջապէս կիներգործեն. առանց դրսից մատնացոյց անելը. սակայն այս ենթադրութիւնը սխալ է, վասն զի դպրոցի մէջ ոչինչ այնպէս շուտ անցողական չէ, որչափ սրտի վայրկենական դգացուիլը։ Հատուածի մէջ պարունակուած բարոյական դասողութիւնները պէտք է առանձնապէս մատնացոյց անել, յուռաջ բերել, պարզել, բացատրել և որոշել. այս է սրբազան պատմութեան ուսուցման գլխաւոր արժանաւորութիւնը։

Վատ յատկութիւնները պէտք է իսպիս դատապարտել, լաւ յատկութիւնները գովաբանել։ Իւրաքանչիւր հասուածիդ դասին բնական եւ բարոյական հիմնագատակարները պէտք է տրտնջալով տալ դրի մէջ գանուած հանապատաստանի իսոտքով կամ նախադասութեամբ, եւ այդ պէտք է սանիկները բերան դիտենան։ այս կրնի ամեն հասուածի կրօնա-բարոյական նիւթի ընտրոյա՞ն։ Ա յանախադասութիւնները պէտք է ժողովել եւ կարգաւորել մի առանձին տետրի մէջ։ այսպիսով այս բոլորը կրնի նոյն իսկ սանիկի ինքնուրոյն աշխատութիւնը, նորա ճաշակի սեպհականութիւնը։

Արտագրան պատմութեան մէջ պատահեցնել օգուտ քաղիլու մասին նպատակ տարբեր կարծիքներ կան։ ոմանք ուղղակի պատկերն հնդիսել տալիս եւ ապա սկսում պատմութիւնը։ այլք մի անգամ պատմելուց յետոյ են դիտել տալիս, իսկ ոմանք եւ պատկերները յետաջ են բերում նիւթի մշակման միջոցը։ Մեր տեսակէտով ճիշտ է միայն վերջինը։ միայն միջնեան հինգերորդ տատիճանի վերայ պէտք է յետաջ բերել նկարը եւ նոյն իսկ տաննինելը պէտք է բոլորտին նկարի նշանակութիւնը։ Հինգերորդ տատիճանի վրայ տանիկը պէտք է դոյդ տայ թէ արդեօք յիշած է ամբողջ հասուածը, թէ չէ, եւ սրանից եւ նա պէտք է կարողանայ քացատրել այդ հասուածին վերաբերեալ նկարի ամբողջութիւնը։ Ա յետոյ յերեան է գալիս կրկին տանիկի ինքնագործունէութիւնը, որ իւրեան եւս ուրոյնութիւն է պատճառում եւ այդ տրամադրութեան մէջ վերջացնում այդ հասուածի մեթոդական միջոցները։

Իւրաքանչիւր մեթոդական միջոցներ, այսինքն հասուածի նիւթի մշակումը պէտք է տեղի ունենայ հետեւեալ տատիճաններով, որոնք հիմնուած են հոգեբանական օրէնքների վերայ եւ հետեւեալներն են։

(Շար. նայելի) ԻՍՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ.

ԱՋԳԱՅԻՆ

Ամսոյս 17 և 18ը նշանաւոր օրեր էին։ Այդ օրերը կատարվեցան ի վաղուց ցանկալի Ձեռնադրութիւնք Ս. Գայիանէի վանքում սրբազործութեամբ Գեր. Ներսէս Սրբազան Եպիսկոպոսի։ Ս. Էջմիածնայ Ձեմարանը Հնդհատասանամեայ երկունքից յետ ի վերջոյ տուեց իւր երեխայրիքը Հայ եկեղեցւոյ և ազգին։ 17ին առաւօտեան Սարկաւագութեան աստիճան ստացան Ձեմարանի Տեսուչ Մեծ. Պ. Արշակ Նահապետեան և Ձեմարանի ուսումնաւարտ սանները Պ. Պ. Կարապետ Տէր Մկրտչեանց և Գէորգ Զէօրէքչեան ու երրորդ լսարանի ուսանող Գարեգին Յովսէփեանը։ Նոյն օրը երեկոյեան Սարկաւագ Արշակ Նահապետեանը վարդապետութեան կոչումն ստացաւ և առաջիկայ օրը 18ին արժանացաւ քահանայութեան աստիճանին Տէր Նահապետ անուամբ իսկ երեկոյեան ստացաւ կրօնաւորութեան վեղարը։ Ձեռնադրութիւնք մեծ հանդիսով կատարվեցան ի ներկայութեան բոլոր միաբանից Ս. Աթոռոյս և խուռն բազմութեան ժողովրդականաց, որոց շատերն եկած էին Երևանից և այլ տեղերից։ Բոլորեցուցն երեսների վերայ փայլում էր ուրախութիւն անսահման և գոհունակութիւն։ Սոցա պատճառն ոչ թէ հանդէսների փառահեղութիւնն էր. որքան այն հանգամանքն, որ վերջապէս Ս. Աթոռի Ձեմարանն, որ երկուց հայրապետաց՝ հանգուցեալ երջանկայիշատակ Գէորգի, հիմնադրի նորա և ներկայ Աստուածարեալ Մակարայ հոգացողութեանց անդրանիկ առարկայն եղած է, տուեց իւր հասուն պտուղն Ս. եկեղեցւոյն և ազգին։ Անշուշտ զուարճացաւ ի Տէր հանգուցեալ Հայրապետի հոգին երկնքումն, ինչպէս զմայլեցաւ հոգեպէս նորա յաջորդ ներկայ Հայրապետն ամենայն Հայոց։ Ձեմարանն, որ ազգի հոգևոր և մտաւոր կեանքի աղբիւր լինելու նպատակաւ հիմնուեցաւ և պահպանուեցաւ, սկսաւ արդէն տալ իւր պտուղն։ Ուրախացաւ

միաբանութիւնն Ս. Աթոռոյս իւր նորընծայ արժանաւոր միաբանների համար։ Ուրախացաւ ժողովուրդն և ցնծացաւ, որովհետև բացուեցաւ նորա համար դուռն, որտեղից շարունակ պիտի ելանեն նորա հոգևոր և մտաւոր շինութեան համար արժանաւոր հոգևոր հայրեր։ Ուրախ է և Սուրբ Եկեղեցին, որ պիտի ստանայ իւր արժանաւոր սպասաւորները, ի վերջոյ ուրախ էին և են իրաւամբ և՛ նորընծաները, որոնք բարի օրինակ էղան իրանց յաջորդներին ընթանալու այն ճանապարհով, որ պատրաստել և հարթել էր նոցա համար հոգեւոր Իշխանութիւնն և որ պիտի տանէ նրանց դէպի պարտաճանաչութիւն, ի հոգևոր շինութիւն ազգի և պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ, որոյ հարազատ զաւակ դաստիարակուած են։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ի ՎԱՐՁՈՒԹԵՆԷ ՀԵՄԱՐԱՆԻ

1· Հնազանդութեան յաշակերտութիւն Հեմարանի Մայր Եկեղեցւոյս Սրբոյ Էջմիածնի կատարին մի անգամ և եթէ ի տարւոջ և այն աւուրքք ինչ յառաջ քան զսկիզբն ուսումնական տարւոյ:

2· Յանկացողք մտանել յաշակերտութիւն Հեմարանիս մատուսցեն խնդիր յանուն Վեհափառ Կաթուղիկոսին, ոչ անազան քան զվին Յունիս ամսոյ:

3· Ընդ խնդրագրին պարտէ առաջի առնել վկայագիրս ուսման, բարի վարուց, ծննդեան և մկրտութեան և պատուաստման ծաղկի:

4· Նորեկ աշակերտք և ուսանողք գնանին ի քժշկէ Հեմարանիս, որ և տայ Տեսչին զգրաւոր տեղեկութիւն զառողջութենէ նոցա:

5· Ի դպրոցական դասարանս ընկալեալ լինին առհասարակ ուսեալքն ի վարժարանս և կամ հրահանգեալքն առանձին կրթութեամբ, իսկ յառաջինն լսարան Հեմարանիս՝ նոքա միայն, որք ունին վկայագիր աւարտման դպրոցական դասընթացից:

6· Յետ կանոնաւոր հարցաքննութեան ընկալցին յաշակերտութիւն յամենայն դասարանս Հեմարանիս· իսկ վասն մտանելոյ ի Վերագոյն լսարան՝ ենթարկեսցին հարցաքննութեան յայն յամենայն առարկայս՝ զորս կարևոր համարիցի Ուսումնական խորհուրդն:

Նշանակութիւն· Վասն մտանելոյ ի Գ· դասարան պահանջի անթերի գիտութիւն դասընթացից եկեղեցական-ծխական ուսումնարանաց· իսկ վասն մտանելոյ իմիւս դասարանս աշակերտք պարտին քննիլ ըստ ծրագրի հաստատելոյ ի Վեհափառ Կաթուղիկոսէն, ի պետս ընծայական դպրոցաց:

7· Յանկացողք մտանել յառաջինն լսարանն

Ա՛եմարանիս վկայագրով աւարտման դպրոցական դասընթացից, վերատին ունին ընթարկիլ Հարցաքննութեան յամենայն առարկայս, երբ պիտի առաջին անգամ էջ ի վերայ առաւել դասի պատրաստ:

8· Յետ Հարցաքննութեան ընկալեալ լիցին ի շարս աշակերտաց՝ որք արժանաւոր դատիցին Համալսարանական խորհրդոյն:

Ծանուցումն· Պահանջի՝ զի ընկալեալքն յաշակերտութիւն՝ լիցին ուշիմք, երկարոգիք, փափկաձայնք, բարեկազմք և բարեբարոյք:

9· ՅԳ· դասարան Ա՛եմարանին ընկալեալ լիցին պատանիք 14—16 ամեայ, և ըստ այսմ Համեմատութեան ի յաջորդ դասարանս:

10· Աշակերտք Ա՛եմարանի դիշերօթիկք են ամենեքեան, թէ ձրիավարժքն և թէ թոշակաւորքն, որք առանան զուսուցն, անուն, հագուստ և զամենայն առողջապահական խնամս:

11· Թէ ձրիավարժից, որ ի Հաշիւ Մայր Եթոռոյս, որոշի ամ ըստ ամէ, ըստ բարեհաճ կարգադրութեան Վեհափառ Կաթուղիկոսի:

12· Աշակերտեալքն պարտին կանխաւ մատուցանել ի գրաւ՝ յայսկոյս կովկասեանք 50 րուբլիս, իսկ եկեալքն յայլոց վիճակաց Ռուսաստանի կամ ի տար աշխարհաց՝ րուբլիս 75, որպէս զի Հատուցցի այդ ի ծախս վերադարձի նոցա ի Հայրենիս, և ի պին կորուսեալ և վատնեալ զրենոյ, Հանդերձեղինաց և այլոց իրեղինաց:

13· Իւրաքանչիւր թոշակաւոր վճարեսցէ ի տարին րուբլիս 200, ի կրկին նուազս· ի Սեպտեմբեր և ի Յունուար ամիսս:

14· Եթէ թոշակաւոր ոք ելցէ կամ արձակիցի մինչչև բոլորեալ ուսումնական կիսամեկին, թոշակ նորա ոչ դարձուցցի յետս:

15· Յամառնային արձակուրդս, եթէ ծնողք կամ բարերարք կամիցին առնել զորդիս իւրեանց ի Հայրենիս, ծախք երթևեկութեանց նոցա լիցին ի ծնողաց կամ ի բարերարաց: